Թ· ՏԱՐԻ 2613 ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 30 ՀՈՌԻ 4385 9 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1892 30 ՐԷՊԻՒ ԷՒՎԷԼ 1310 ՈՒՐԲԱԹ

20 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Կ· Պոլիս

درعليه ده غلطه ده آره ولك غزته سى اداره سنه

Direction du journal AREVELK
Galata, CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳԻՐ

Քաղաքական եւ Ազգային

20 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ· Պոլսոյ համար	Տարեկան	150
»	Վեցամսեայ	75
»	Եռամսեայ	40
Օտար երկիրներէ	Տարեկան Ֆրանք	56
» »	Վեցամսեայ »	28
Ընտիր թուղթի վրայ մասնաւոր տպուած	Տարեկան Օսմ· Ոսկի	2
Գաւառաց բաժանորդ	Դրուշ	50

Խմբագրութեան ուղղուած նամակ կամ այլ գրութիւն ետ չի տրուիր·

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ· ՊՈԼԻՍ, ՀՈԿՏ· 9/21 1892

ԽՄԲԱԳՐԱԿԱՆՔ

ԵՐԵԿՈՅԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՔ
ԿԱՄ
ԴՊՐՈՑԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄԸ ՇՈՒԿԱՅԻ ՄԷՋ

Անգլիոյ մէջ երեկոյեան վարժարանք այնքան ընդարձակում ստացեր են որ պէտք կը զգացուի յատուկ օրէնք մը քուէարկել տալ Խորհրդարանին, ապահովելու համար այս հանրօգուտ հաստատութեանց վիճակն, և անոնց արդիւնքները պաշտօնական վաւերացման ենթարկելու համար։ Երեկոյեան վարժարանք իրական պէտքի մը կը պատասխանեն ժողովրդային դասերուն մէջ։ Անգլիացւոց մէջ, որպէս ուրիշ ազգերու մէջ, գործաւոր, արհեստաւոր կամ փոքրիկ խանութպան դասակարգը շատ անգամ չի կրնար նախակրթական ուսմունքէ աւելի բան մը սորվեցնել իր զաւակաց։ Ոմանք, աւելի կարօտեալք, նոյն իսկ բարձրագոյն նախակրթական ուսմունքը չաւարտած կ'առնուն կը հանեն տղայքը դպրոցէ, ու գործի կը դնեն, գործարան, արհեստանոց, կամ վաճառատուն մը։ Բայց ինչո՞ւ դատապարտել այս տղայքը թերուս մնալու. եթէ ուսմունքնին կատարելագործէին, գէթ նախակրթական ուսմունքը, կրնային ո՛չ միայն կատարեալ մարդ ըլլալ, այլ և իրենց գործին մէջ աւելի յառաջ երթալ։ Եւ յետոյ, ո՞ւ գիտենք, կարելի է հանճարներ ըլլան այս գժբախտ տղայոց մէջէն։ Թերեւս քանի մը գիտութիւն, քանի մը լեզու աւելի սորվելով օրին մէկն առաջին կարգի հանճար մը լինին, գիտուն մը, գրագէտ մը, արուեստագէտ մը, հնարիչ մը, ո՞վ գիտէ։ Նոյն իսկ ԺԹ դարուս պատմութիւնը չէ՞ ընծայեր նշանաւոր հանճարներ, որք սակայն թերուս ելած էին դպրոցէ, և կանուխէն չուկայ գրուած, բայց իրենք իրենց աշխատելով, մէկ մէկ կարեւոր մարդ եղան։ Բայց թող հանճարները, նոյն իսկ հասարակ մանկանցուք պէտք չունի՞ն այսպիսի դարու մը մէջ մանաւանդ՝ լեզուաց և գիտութեանց կռիւն պաշար մ'ունենալու՝ ո՛ և իցէ գործի մէջ յառաջդիմելու համար։—Այս մտածմամբք, եւրոպեան զարգացեալ երկրաց մէջ, նաեւ Անգլիոյ մէջ, հիմնուած են երեկոյեան վարժարանք, ուր կը յաճախեն կիսաւարտ աշակերտք նախակրթարանաց, որք ցերեկի գործն աւարտելէ յետոյ վաճառատան, գործարանին կամ արհեստանոցին մէջ, երեկոյին կամ գիշերը քանի մը ժամ դաս կ'առնուն ամէն օր, կամ շաբաթը քանի մը օր։ Չափահասներ ալ կ'օգտին այս երեկոյեան վարժարաններէ։ Անոնց մէջ կան որ պարզապէս «շարունակութիւն» են նախակրթարանաց, կան ալ որք անկախ են, և նոյն իսկ միջնակարգ վարժարանաց առարկայներ դաս կուտան։

Մարզասէր, գործարանատէրներ կան որք հարիւրաւոր և հազարաւոր մարդիկ աշխատցնելով, շատ մը անչափահասներ ալ ունին իրենց տրամադրութեան ներքև, որոց գիտութեան համար, և նոյն իսկ գործարանին օգտին համար, հոն այն հաստատութեան մէջ իսկ բացած են երեկոյեան վարժարաններ, կամ նախակրթարանի շարունակող վարժարաններ։ Հազարաւոր անչափահասք կ'օգտին այս ներգին ուսանելու դաստիարակութենէն, և իրենց օրապահիկը ճարելով հանդերձ, որով կ'ապրին, ու մինչեւ իսկ անկար ծնողք և խեղճ փոքրիկ քոյրեր ու եղբայրներ կ'ապրեցնեն, քանի մը տարւոյ ներութեամբ իրենց ապագայն կը փերացնեն · զի քանի մը տարւոյ աշխատութենէ յետոյ կրնան քննութիւն անցունել կրթական իշխանութեանց առջեւ, ու յաջողագոյնք երբեմն աւելի բարձր հաստատութիւններ գրուելու և աւելի կատարեալ ուսում սորվելու համար հանրային նպաստից կ'արժանանան։ Ուրեք ուրեք, օրինակի համար ի Զուիցերիա, օրէնքը պարտաւորիչ կ'ընէ ուսմանց այս շարունակումն տղայոց դպրոցի այն պայմանաւ արձակելով նախակրթարանաց աշակերտներն որ «շարունակեն» երեկոյեան վարժարանաց մէջ։ Բայց Անգլիոյ մէջ ծնողք իրաւունք ունին իրենց տղայքը դպրոցէն հանելու՝ նախակրթարանի այն ինչ տարին բոլորելէն ետեւ, դեռ եւս բարձրագոյն նախակրթական ուսմունքը չաւարտած։

Անգլիացիք հաստատութիւն մ'ունին որ կը պակսի ո՛չ-բողոքական հասարակութեանց, կիրակնօրեայ վարժարանք, որք կ'ամբողջացնեն տղայոց կրօնական-բարոյական կրթութեան լծերն, ու պարկեշտ բանասեղծութեանց ընթերցմամբ, մինչեւ մէկ աստիճան գրական ու լեզուական կրթութեան պակասն եւս զգալի չեն ըներ այնքան, և ըստ ամենայնի կարգաւորեալ հաստատութիւններ են, իրենց տարիներու բաժանմամբ, քննութեամբք, պարգեւաբաշխութեամբք, մրցանակներով, ևլն։ Այս օգտակար հաստատութիւնք շատ կը գնահատուին բողոքական հասարակութեանց մէջ, և մէկէ աւելի կերպիւ կը ծառայեն հասարակաց օգտին · զի մինչեւ անգամ եթէ մեծ բան մը չսորվեցնեն աշխարհիկ իմաստով, բայց կիրակի օրերը պատանիներու, երիտասարդներու և երիտասարդուհիներու միտքերը պատուական բաներով զբաղեցնելով, ժամանակ չեն թողուր անոնց կանուխէն մոլութեան զոհ երթալու, և անոնց միջոց կ'ընծայեն կենաց «տագնապալի» շրջանը քով քովի, միասին ու լաւ ընկերակցութեան մէջ անցունելու։ Երեկոյեան վարժարանք աւելի գործնական, աւելի աշխարհիկ պէտքի մը կը համապատասխանեն, և ինչպէս Զուիցերիոյ մէջ, Անգլիոյ մէջ ևս կը զգացուի թէ ազգն օրըստ կը շահի եթէ իր պարզ արհեստաւորներն անգամ ուսեալ մարդիկ ըլլան։ Ուսեալ արհեստաւորը թէ աղէկ և թէ շուտ կը սորվի իր արհեստը, միտքը խորհելու վարժուած ըլլալով, և իր սովորական ուսմանց կարգին մէջ գտնելով ընդհանուր սկզբունքներն ու կանոններն արհեստական ճշմարտութեանց ու փորձառութեանց։ Եւ յետոյ, ուսեալ արհեստաւորն ևեթ կրնայ աւանդական չափէն օգտակար շեղումներ ընել, նոր բաներ աւելցնել իր արհեստին վրայ, յառաջադէմ արհեստաւոր մ'ըլլալ։ Գործարանատէրք եւս ո՛չ թէ մարդասիրութեամբ այլ գործնական օգուտ մտօք աւելի կը նախընտրեն ուսեալ զարգացեալ արհեստաւորներն, որք այնքան շատ բանիմոյ չեն ըներ, զի ընդհանրապէս լաւ կը վարձատրուին։

* *

Մեր ազգին մէջ այս հաստատութեանց մօտէն կամ հեռուէն նմանող բան մը չունինք։ Մեր մէջ արդէն չկայ օրէնք՝ նախակրթութիւնը պարտաւորիչ ընող և ամենայն ինչ ծնողաց բարեյօժարութենէն կախում ունենալով, տղայք միշտ աւելի թերուս կը թողուին, և նախակրթարանաց անդոհացուցիչ վիճակն եւս այնպէս կը բերէ, որ մինչ եւրոպեան նախակրթարանաց մէջ թերուսք բացառութիւն են, մեր մէջ ընթացաւարտք են բացառութիւն, և ի՛նչ բացառութիւն, կարի հազուադէպ հազուագիւտ բացառութիւն։

Մենք ո՛չ կիրակնօրեայ վարժարան ունինք, ո՛չ երեկոյեան վարժարան, և այս խնդրին ո՛չ իսկ յուզելու վիճակին մէջ ենք, զի արդէն ցերեկը չխօսէ չխօսակ ի՞նչ կը սորվեցնենք որ երեկոյին ի՞նչ սորվեցնենք։ Երեկոյները կարդալ գրել, իրա՞ւ կ'ընէք։ Կիրակի օրերը չորս պատի մէջ հաւաքուիլ և բան կարդա՞լ։ Հապա կիրակի օրերն ո՞վ պտոյտի պիտի երթայ, Ղալաթիոյ, Բերայի կողմերը, կամ գիւղերը, Ջուրերն։ Հապա երեկոյներն ո՞վ գիշերային այցելութեանց պիտի պտըտի տուն տուն, մանաւանդ աւելի ճոխն որ գիշերները կը համբուռնան, կ'երկնան, երջանիկ գիշերներ որոց կէսն ու երեք—քառորդը կարելի է թղթի սեղանին, Պրիչի, Բօզքրի, Պագարայի սեղանին շուրջ անցունել, աւշի իրիկուան նախատօնակը նաւամատոյցի կամ հայարանի սրճարանին, գինետան կամ զբօսարանին մէջ անցունելէն ետեւ։

Ինչո՞ւ համար ուրեմն զարմանանք եթէ չուկայի կեանքն ևս քան զեւս կը կորդէ, կ'իլուրացնէ, կ'ապականէ դպրոցական պատանեկութիւնը, զոր նախակրթարանէն կը յափշտակէ հազիւ 12 տարեկան, և կը նետէ չուկայի արհեստաւորի աշկերտ կոչուած ստահակներուն մէջ, որոց ընկերակցութեան շուտ վարժուելով, փոքրիկ դպրոցականը կանուխէն կը սորվի ծխել, խմել, արբենալ, և 14 տարեկանին մէջ արդէն կը յաճախէ փողոցի անկիւնի գինետունն, առանկան հովեր կ'առնու, ամանդական բացագանչութիւններն արձակելով ընդ մէջ օղիի երկու շիշերուն, և 30 փարանոց ծխախոտի մխելն ու հասարակ խաբեբօղէն այս շոգիին մէջ կը մծագնի, կը թուլնայ, կը բթանայ, կը փճանայ ինչ լաւ սկզբունք և գաղափար որ իր ուղեղին մէջ մնած էր, և 15 տարեկանէն ետքն, ահա՛ ստահակ մ'եւս, գուցէ ընտանիք կործանող սրիկայէն ստահակ մը, յորմէ հայ հասարակութիւնն ամենեւին բարիք չի կրնար ակնկալել։ Ապաքէն, մեր արհեստաւոր-խանութպան դասակարգի ազգաց կրթութեան արդի եղանակին մէջ, եթէ գտնուին որ կանուխէն չուկայ հանուելով բարի զաւակ ըլլան, ընտանեաց պարկեշտ ննջեցեալներ, ուսումնասէր և աշխատասէր տղայք, հրա՞շք մը հաչակուելու չափ հազուադէպ պէտք է համարինք։ Դպրոցն արդէն խիստ քիչ բան կ'ընէ յօգուտ այս տղոց։ Չուկան կու գայ կ'արգիլէ այն եղածն ալ։ Եւ գինետունն ամենայն ինչ կը թաղէ կը վերջացնէ....

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՖՐԱՆՍԱՑԻՔ ի դուր դող եկեր էին Տահոմէի Ֆրանսական զօրախմբին կացութեան վրայ։ Գնդ· Տոտս եթէ երկու-երեք օր լուր չէր ղրկած, պատճառն ո՛չ թէ ձախողուած մը կռիւը կամ հեռագրաթելերու թշնամեաց կողմէ կտրուիլն էր, այլ զի կը յառաջանար դէպ ի ներս, և շուտով չէր կրնար հաղորդակցիլ ծովեզերքին հետ։ Հոկտ· 14ի գիշերը ծովային նախարարութեան եկած հեռագիր մը կ'ըսէ թէ Ֆրանսացիք գրաւեր են Սաւոնի, ուստից չուած էին Տահոմէյցիք, և սոցա թողած ռազմամթերք և պաշարը կը ցուցնէին թէ աճապարանօք փախած էին։ Հոկտ· 12ին Ֆրանսացիք հասան Տահոմէյցւոց յառաջապահ կայանը, Բանայէ վեց քիլոմէդր հեռի, որ զօրեղապէս ամրացեալ է։ Նոր ճակատամարտ, նոր յաղթութիւն Ֆրանսացւոց, որոց կորուստք 4 մեռեալ և 20 վիրաւորեալէ աւելի չեն։ Ֆրանսացիք շարունակեցին իրենց յառաջխաղացումն։ Հոկտ· 13ին նոր յարձակում մը պիտի ըլլար։ Անկէ ի վեր ութ օր է, և դարձեալ լուր չկայ։

Որովհետեւ այս Ֆրանսական յաղթութեանց վերջը չի գար, և Տահոմէի թագաւորն ուր որ է հոն կը մնայ դեռ, և որովհետեւ այս տահոմէական ամբութեանց ալ վերջը չի գար, Երեսփ· Ժողովոյ մէջ հարցապնդում մը պիտի ըլլայ, և բացատրութիւնք պիտի պահանջուին նախարարութենէն։

Պ· ՔՈՇՐԻ, երբեմն նաւահանգստից և հեռագրատանց նախարար, պաշտօն ունի 1893ի պատերազմական նիւթացոյցին վրայ տեղեկագիր բերելու Ֆրանսայի Երեսփ· Ժողովոյն, ի դիմաց խորհրդարանական յանձնաժողովոյն։ Այս տեղեկագիր գաղափար մը կուտայ ժամանակիս զինուորականութեան պահանջած ծախուցութեանց վրայ։ Պ· Քոշրի թուանշաններով կը հաստատէ թէ 1871էն, այսինքն՝ 21 տարիէ հետէ Ֆրանսա 18 միլիառ Ֆր· ծախք ըրած է իր բանակին համար և երկու միլիառ 891 միլիոն Ֆր· ալ պակաս զինուորական նիւթեղէնները վերահաստատելու համար։ Զօրաց պահպանութեան համար տարեկան 580 միլիոն Ֆր·ի ծախք եղած է։ Գործօն և պահեստի բանակաց արդի ոյժերն են 1,650 վաշտ հետեւակ, 600 հեծելագունդ և 750 հրետանի։ Երկրային բանակն, այսինքն վերջին պահեստ, որ վեց կարգէ կը բաղկանայ և ընդ ամենայն 850,000 հոգիէ, դեռ ամբողջովին կազմակերպուած չէ։

ՆՈՐ ՆՐԲՈՒԹԻՒՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԽՆԴՐՈՅՆ Ի ՊՈՒԼԿԱՐԻԱ. — Սվօպօտա կը ծանուցանէ թէ պուլկար կառավարութիւնը գաւառային ժողովներուն պատուիրեր է հանրային հասոյթներէ այլ եւս նպաստներ չտալ յունական վարժարաններուն և այլ ամեն մասնաւոր վարժարաններուն ուր պաշտօնական լեզուն պուլկարերէն չէ · զի յոյն դպրոցներուն ցարդ դրամական նպաստ կը տրուէր՝ յունաբնակ գաւառակներու հանրային հասոյթեանց եկամուտներէն անկուած։ Այս տնօրինութեամբ պուլկար կառավարութիւնն իր տհաճութիւնը կը ցուցնէ այն զիջման համար զոր մետրապոլիտներուն ժամուն հարկադրեցաւ ընել՝ ազգային լեզուի ուսումը թոյլատրելով ոչ-պուլկար վարժարանաց մէջ։ Բայց մինչեւ մէկ աստիճան իր իրաւանց սահմանին մէջ կը գործէ, և հաւանական չէ որ Յոյնք բողոքեն։ «Ո՛չ ձեր դրամը կ'ուզենք, ո՛չ ձեր լեզուն,» պիտի ըսեն հաւանօրէն Յոյնք Պուլկարներուն, թէպէտ յունաբնակ գաւառներու մէջ հանրային եկամուտներէն առնուած և յունական վարժարանաց տրըուած նպաստք դարձեալ Յունաց դրամն են։

ՅՈՒՆԱՍՏԱՆ ԵՒ ՌՈՒՄԱՆԻԱ. — Խօսակից ընդունեց Յունաստանի մէջ բնակեալ ռումեն հպատակներու պաշտպանութիւնն, Յունաստանի և Ռումանիոյ յարաբերութեանց խզման միջոցին։— Ռումեն կառավարութեան լրագիրք կ'ըսեն թէ Յունաստանի կողմէ յարաբերութեանց խզումը բանաւոր չէր ամենեւին · զի ռումեն կառավարութիւնն օրինաց շրջանակին մէջ շարժելով պարտէր ռումանական դատարանաց թողուլ Զափքայի ժառանգութեան խնդրոյն լուծումը, մանաւանդ որ (ինչպէս Արեւելքի երեկի թուով ալ պարզուեցաւ) ի Ռումանիա գտնուած այս կալուածոց խնդրոյն մէջ, հանգուցեալին բազմաթիւ ժառանգորդք դիմած էին ռումանական դատարաններու, և Զափքայի կտակին անվաւերականութիւնը կը փաստաբանէին և իրենց ժառանգական իրաւունքները կը պաշտպանէին։ Ռումեն կառավարութիւնն ուրեմն չէր կարող իրաւախոհ ըլլալ հելլէն կառավարութեան հետ, կամ անոր պահանջման համեմատ գործն իրաւարարութեան յանձնել։ Դատերը պիտի շարունակուին ռումանական դատարանաց առջեւ, և ինչ որոշում որ տրուի, օրինաւոր պիտի համարուի։

ՊՈՒԼԿԱՐԻՈՅ Սոպրանիէն հոկտ· 15/27ին սովորական նստի հրաւիրեալ է իշխանական հրամանագրով։ Յոյսք կը լսուան որ այս նստաշրջանի մէջ կրթական օրէնքի ծ· յօդուածի ջնջումն առաջարկուի։ Իսկ հաւանեալն Պուլկարք կը պահանջեն որ օրէնքը չփոխուի, թէև գործադրումը դադարեալ մնայ առ այժմ։

ՌԸՆԱՆԷ զատ, ֆրանսական կառավարութիւնը կ'առաջարկէ Բանթէոնի նախկին եկեղեցւոյն մէջ թաղել Միշլէի, Էտկար Քինէի, Լամառթինի, Լիթրէի, Առակոյի և Հանրի Մառթէնի ոսկերոտիքը։

ՀՆԴԿԱԽՏԻ մասին Տփղիսի Թերթերուն մէջ կը կարդանք·

Ռուսական Սվէտ լրագիրը հանել է խոլերայով վախճանուողների վիճակագրութիւնը տերութեան հաղորդագրութիւնների վրայ հիմնուած։ Այդ վիճակագրական տեղեկութիւններին նայելով Յունիսի 11ից մինչև օգոստոսի 22ը ամբողջ Ռուսաստանում մեռել են 128,517 մարդ։

Խոլերայով մեռնողների ցուցակին նայելով առաջին տեղը բռնում է Անդրկովկասը, ուր մեռել են 15,169 հ·

2·	տեղը Դոնի շրջ· ուր մեռ·	14,415	»
3·	Թերէքի շրջանը	11,174	»
4·	Սարատովը	10,187	»
5·	Կուբանի շրջանը	8,938	»
6·	Սամարա	8,642	»
7·	Թուրքեստան	7,704	»
8·	Աստրախան	7,197	»
9·	Անդրկասպեան երկիր	5,037	»
10·	Դաղստան	4,747	»
11·	Վորոնեժ	4,344	»
12·	Երևան	4,162	»

Երկրորդական տեղեր են բռնում այն նահանգները ուր մեռնողների թիւը 3000 հոգի է եղել։ Ռուս լրագիրն այս թիւը (128,517) մեծ չէ գտնում մի պետութեան համար որ 100,000,000 բնակիչ ունի։

ԿԼԱՏՍԹՈՆԵԱՆՑ մեծամասնութենէն երկու ձայն պակսեցաւ։ Իրենցմէ Պ· Ուինթըրպոթամ, Չէսթըրի երեսփոխանը, մեռած էր, որով քուէ մը պակսած էր։ Կլատսթոնեանք կը յուսային այս կորուստը դարմանել, ընտրելի առաջարկելով յայտ ժողովրդական անձնաւորութիւն մը, Սըր Ուիլֆրիտ Լօսըն, որ ոգելից ըմպելիք բերանը չի դներ։ Դժբախտաբար Կլատսթոնեանց համար, պահպանողական ընտրելի մը, որ սակայն «Ջինօ»ի տաւերներուն մէջ չի խեղդուիր, Պ· Մասըր, յաջողեցաւ երեք քուէի առաւելութեամբ

—)(163)(—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԷՄԻԼ ՌԻՇՊՈՒՐ

ՍԱՆՏՐԻՅԵՈՆ

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

ԾԻԱԾԱՆԸ

—Կապրիէլ, յարեց Ժան Լըկռան, բայց բնաւ չէք խօսիր ինձ ձեր եղբօր Բիէռ Անկլատին վրայ, որ իմ մանկութեան բարեկամս եղաւ։

Սանտրիյեոն սարսռաց և պատասխանեց ·

—Իրաւ, այնքան կը վախնամ գէշ լուր մըն ալ իմանալէս որ...։

—Բիէռ Անկլատի մասին բարեբաստիկ լուրեր պիտի տամ ձեզ։

—Ուրեմն, ըսաւ, ձեռքն ուժգնօրէն սրտին կրթնցունելով, Շարմիյեոն դարձած է, հօրս հետ կը բնակի, իր սայլապանի արհեստին վերսկսած է · ամուսնացա՞ծ է։

—Բիէռ Անկլատ չէ ամուսնացած, կ'երեւի թէ ամուրի մնալ կը փափագի։ Երկար, խիստ երկար ժամանակ հեռի մնաց Ֆրանսայէն · վերադառնալէն ի վեր, ատեն ատեն Շարմիյեոն կուգայ ամբողջ օր մը հայր Ժերօմին հետ անցունելու համար։

—Այսպէս, անիկա Շարմիյեոն չի բնակիր · ո՞ւր ուրեմն կը բնակէ ծերունի հայրս։

—Ֆանշէթ Ռուսօն։

—Ա՛հ, բարի Ֆանշէթը։

—Այո, կրնաք բարի անուանել զայն։

—Ժան Լըկռան, եղբա՞յրս ուր կը բնակի ուրեմն։

—Այժմ ի Պլուա։

—Ի՞նչ կ'ընէ։

—Բայց, պատասխանեց Ժան Լըկռան, ժպիտ ի շուրթն, միշտ զինուոր է։

—Մի՞շտ զինուոր, կրկնեց Կապրիէլ, զարմանք յայտնելով։

—Աստուա՛ծ իմ, երբ զինուոր կ'ըսեմ՝ խօսելու ձեւ մըն է։ Ձեր եղբայրը, Կապրիէլ, որ շատ մը ուրիշներու պէս մեկնած է պայուսակն ի կռնակ, փայլուն կերպով յառաջ տարած է իր ճամբան։ Օր մը, հայր Անկլատ նամակ մը ընդունեց իր որդիէն · Բիէռ կը ծանուցանէր թէ հարիւրապետ էր և Պատուոյ Լէգէոնի ասպետ անուանուած։

Կապրիէլի ակնարկը ճառագայթեցաւ։

—Օ՛հ, գոչեց, ձեռներն իրար միացունելով, հարիւրապետ, Պատուոյ Լէգէոնի ասպե՛տ։

—Բայց ամէնը չըսի ձեզ · ձեր եղբայրը Ֆրանսա դարձաւ վաշտապետի աստիճանով և կուրծքին վրայ կրելով Պատուոյ Լէգէոնի սպայի խաչը։

Կապրիէլ դանդաչեց և ստիպուեցաւ կրթնիլ Ժան Լըկռանի բազկին։ Հիմակ ուրախութիւնն էր որ զինք կը խեղդէր։ Անմիջապէս ինքզինքին եկաւ և թրթռուն ձայնով մը ·

—Իր կողմէն պատիւ, փառք, գոչեց, իմ կողմէս անպատուութիւն, ամօ՛թ։

—Ի՛նչ կ'ըսէք, բացագանչեց Ժան Լըկռան · ա՛հ, Կապրիէլ, Թշուառականի մը խեղճ զոհը, երեսնուդ տալու կշտամբանք մը չունիք։ Միթէ ձեր մայրը՝ ձեր անմեղութիւնն յայտարարելով, չօրհնե՞ց զձեզ։ Միթէ ձեր հայրը, որ մեռած կը կարծէ զձեզ և միշտ կուլայ ձեր վրայ, վայրկեան մը միտքէն անցուցա՞ծ է թէ իր աղջի՛կը արատ մը բերած է իր պատուին։ Չեն անիծուիր անոնք, որոց վրայ կ'ողբացուի։ Կապրիէլ, Կապրիէլ, եթէ ձեր դժբախտութիւնը մեծ եղած է, անպատուութիւնն ու ամօթն այն Թշուառականինն է եղած որ ձեր կեանքը խորտակեց։

«Ահա ինչ որ կ'ըսէր ձեր հայրը, ահա ինչ որ կը կրկնէր նա վերստին վերջին անգամ զինք տեսնելուս։

«Ա՛հ, երբ իր քովը դառնաք, պիտի տեսնէք ինչպէս իր և ձեր եղբօր սէրը պիտի մոռցունէ ձեր սոսկալի անցեալին բոլոր վիշտերը։

—Երբեք չպիտի մոռնամ, երբեք չպիտի մոռնամ, Ժան Լըկռան, եթէ յիշողութիւնս չի կորսնցունեմ · բայց հօրս և եղբօրս քով յուսամ թէ քիչ մը երջանկութիւն պիտի գտնեմ։

—Ուրիշ հարցունելիք բան մը ունի՞ք, Կապրիէլ։

—Ոչ, ամէն ինչ որ կը փափագէի գիտնալ իմացուցիք ինձ։ Սակայն...։

—Ըսէք, Կապրիէլ։

—Հայրերնիդ կ'ապրի՞ տակաւին։

—Այո, բայց ձերինին պէս, շատ ծերացած է։

—Ամուսնացա՞ծ էք։

—Ամուսնացած եմ, Կապրիէլ։

—Զաւակներ ունի՞ք։

—Երկու պզտիկ մանչեր, մին տասը, միւսն ութ տարեկան։

—Երջանիկ էք, և արժանի էք երջանիկ ըլլալու։

—Երջանիկ եմ, բայց ոչ այնպէս որպէս կրնայի ըլլալ, պատասխանեց վաճառականը վշտագին շեշտով մը որ մինչեւ Կապրիէլի սիրտը թափանցեց։

Բռնած էր անոր ձեռքը և մեղմով կը սեղմէր։ Սանտրիյեոն հառաչեց և գլուխը խոնարհեց։

Երկուքն ալ միեւնոյն ժամանակ զգացած էին թէ տակաւին իրենց սրտին մէկ ծալքին տակ պահուած կար անցեալ սիրոյ հետքը։

—Ժան Լըկռան, յարեց Կապրիէլ, կամաց մը գլուխը վեր առնելով և ցուցնելով իր դէմքն որ աւելի տժգունցած էր, սիրեցէք ձեր կինն ու զաւակները, երջանկութիւնը, ճշմարիտ երջանկութիւնը ընտանիքին մէջն է։

«Բան մըն ալ պիտի ըսեմ ձեզ։

—Ըսէ՛ք, Կապրիէլ։

—Հոս պաշտօն մը ունիմ կատարելիք · հետեւապէս ժամանակ մըն ալ պէտք է որ Վէրբրէի ագարակը մնամ, հակառակ այն ուրախութեան, այն երջանկութեան զորս պիտի զգայի վաղն իսկ տեսնելով հայրս ու եղբայրս։ Բայց չեմ կրնար, չեմ կրնար։

«Եթէ ինէ առաջ Շարմիյեոն երթաք, ոչ հօրս, ոչ մէկուն մի՛ ըսէք թէ ես մեռած չեմ, թէ զիս տեսած էք · Ժան Լըկռան, խոստացէք որ լուռ պիտի մնաք։

—Կը խոստանամ, Կապրիէլ։

—Շնորհակալ եմ։ Հիմակ բաժնուինք։

—Դարձեալ պիտի տեսնե՞մ զձեզ, Կապրիէլ։

—Կը յուսամ, Ժան Լըկռան, երբ Շարմիյեոն գաք։

Իրարու ձեռք բռնեցին և պահ մը, խիստ յուզեալ, իրարու նայեցան լուռ։

—Մնաք բարով, Ժան Լըկռան, ըսաւ Կապրիէլ։

—Երթաք բարով, Կապրիէլ, կրկնեց նա։

Վաճառականը ջաղացք ուղղուեցաւ արագաքայլ, մինչ Սանտրիյեոն ագարակ կ'ուղղուէր գետեզրին ճամբէն։

Ժ

ԴՈՐԾԸ ԿԸ ՍԿՍԻ

Կասթոն Մելվիլ և Արմանտ հաստատուած էին ի Բըթի-Բաթէլ։ Եթէ հաստատուեցան կ'ըսենք, խօսելու ձեւ մըն է · խակապէս իջեւանում մըն էր եւ այսպէս կրնար ըլլալ։ Ինչպէս եկած էին այնպէս ալ անհետ չը՞պիտի ըլլային, անշշուկ, առանց մարդոց ուշադրութիւնն արթնցնելու, որք տրամադիր են միշտ ուրիշներուն գործոց խառնուելու։

Կեղծ Եոնաթան Միլըրն, որ պարագային համեմատ Տըլօրմ կը կոչուէր, առտու մը իր տարփուհին Ժուանի տարած էր · յետոյ, նոյն իրիկունն իսկ, Փարիզ դարձած էր։ Պիտի զբաղէր իր միւս մեղսակցին հետ, մին այն բազմաթիւ թշուառականներէն, որք կը վխտան մեծ քաղաքին տըղմաթաթաւ ստորայարկերուն մէջ, միշտ ի դէտ որս մը յափշտակելու, ո և է յոռի ձեռնարկ մը փորձելու։

Եոնաթան Միլըրն դիւրաւ համաձայնած էր իր մարդուն հետ որ, կանխիկ տրուած քանի մը ոսկիներու միջոցաւ, և յաւարտ գործողութեան քսանեւհինգ լուիի վարձատրութեան մը խոստումով, հոգւով մարմնով իր նոր վարպետին տուած էր ինքզինքը։

Աւելորդ է ըսել թէ տը Մելվիլ, միշտ խոհեմ, այդ սրիկային ինքզինքը ճանչցուցած էր Տըլօրմ անունով և իր ծրագիրներէն ճիշդ այն մասն եւեթ յայտնած էր նմա զոր պարտաւոր էր գիտնալ նա գործին մէջ իրեն ինկած դերը խաղալու համար ·

Կառքն ու ձիերն որք պիտի ծառայէին Մառի-Մատլէնին առեւանգման, գնուած էին՝ ձիերը արուարձանի մը վարձակալէն, իսկ կառքը՝ տձեւցած հին պերլին մը՝ Թեռնի Թաղին մէկ կառագործէն, որուն մասնագիտութիւնն էր հին կառքերու տալ նորութեան երեւոյթ մը։

Զարմացաւ սա քիչ մը տեսնելով որ կը գնեն իրմէ այս հնումաչ կառքն որ այրուելու սահմանուած էր և զոր ինք քանի մը օր առաջ գտած էր Փարիզի շրջակայները տեղի ունեցած վաճառումէ մը, ըսելով միտքէն · երկաթները կան, որոնք կրնան բանի մը ծառայել։

(Շարունակելի)

կորզել Զէյթլըի աթոռն, որով 40 ձայնի մեծամասնութիւնն իջաւ 38ի: Միւս մասնակի ընտրութիւնք եւս, որք տեղի ունեցան վերջին ընդհանուր ընտրութենէն ի վեր, կլատսթոնեանց համար շատ յաջող չէին եղած, թէպէտ առաջին անգամն է որ այսքա աթոռ մը կը կորսնցնեն:

ՀՈՒՆԳԱՐԻՈՅ խառն ամուսնութեանց խնդրոյն առթիւ, մաճառ կառավարութիւնը, թէպէտ առաւելապէս կաթոլիկներէ բաղկացեալ, որոշեց օրինագիծ մը ներկայացնել Խորհրդարանին, որով կ՚առաջարկէ պարտաւորիչ ընել քաղաքային ամուսնութիւնն, այսինքն՝ ամուսնութիւնք անպատճառ ի ներկայութեան երկուց կողմանց պէտք է արձանագրուին քաղաքային պաշտօնարանի մէջ, ամուսնացողաց կամքին թողլով ապա պսակի խորհուրդը կատարել ո՛ր եկեղեցւոյն մէջ որ ուզեն: Անգլիոյ մէջ արդէն ամեն դաւանութիւնք կը յարգեն այս կանոն:

ԱՒՍՏՐԻՈՅ պատերազմական նախարարը մերժեց այն սպայից խնդրուածքն որք կ՚առաջարկէին նոր ձիարշաւ մը կատարել ընդ մէջ Պերլինի և Վիեննայի: Նախարարը կը նկատէ թէ այս մրցում գործնական օգուտ չունի, և մարդոց հաճոյքին ու հետաքրքրութեան վայրապար կը զոհուին խեղճ ձիեր: Տեսակ մը ցլամարտութիւն է այս, ուր ցուլերը կը չարչարուին ու կը սպանուին ի տես ամենեցուն՝ հանդիսականաց հետաքրքրութիւնը գոհացնելու համար:

Ի ՌՈՒՍԻԱ, պատերազմական ատեանը մահուան դատապարտեց չորս անձեր որք ծայրայեղութիւններ գործեր էին ի Խվալինսք հնտախտի ծագման առթիւ: Ուրիշներ ալ չղթայակապ աշխատութեան դատապարտեցան:

Ի ԼՈՆՏՈՆ, ոստիկանութիւնը զգուշութեամբ ձերբակալեց զՖռանսուա, Ռավաշոլի ընկերներէն, որ ամբաստանեալ է Վէրիի գինետան աւերածին առթիւ:

ՀԵՐՊԵՐԴ ՍՊԵՆՍԸՐ, անգլիացի նշանաւոր իմաստասէրն, որոյ գրեթէ ամեն գործերը թարգմանուած են ֆրանսերէնի և գերմաներէնի, Ռընանի մասին իւր կարծիքն հարցուած ըլլալով, սա տողերը գրեց. «Կը ցաւիմ որ չեմ կարող ձեր հետաքրքրութեան գոհացում տալ, զի երբեք Պ. Ռընանի ո՛ և է մէկ գիրքն ո՛չ իսկ բացած թղթատած եմ:»

ԱԶԳԱՅԻՆ
ԼՈՒՐԵՐ

Տնտեսական Խորհուրդն որոշած է տեղեկագրել Վարչութեան՝ որ ազգային կալուածոց ապահովագրութիւնը պարտաւորիչ ըլլայ և միանգամայն Վարչութիւնը քննէ այն պայմաններն որովք կ՚ապահովագրուին նոյն կալուածք:

* * *

Երուսաղեմէն կը գրեն թէ Ս. Յակոբայ Վանուց մայրապետներու երիցագոյնը Թուրֆանտա Խաթուն՝ սեպտեմբերի վերջերը մեռեր է հարիւր տասնևհինգ տարեկան հասակին մէջ: Յուղարկաւորութիւնը մեծ հանդիսիւ կատարուեր է, մասնակցութեամբ բոլոր միաբանաց: Ամեն. Տ. Յարութիւն Ս. Պատրիարք Հայրը ներկայ գտնուելով՝ դամբանական խօսեր է:

Հանգուցեալը՝ բնիկ Կեսարացի՝ 17 տարեկան հասակին մէջ Ս. Յակոբայ Վանքի մայրապետանոցը մտնելով, 98 տարիէ ի վեր կը ծառայէր հոն և վեց Պատրիարքներ տեսած էր:

Թուրֆանտա Մայրապետի վրայ գրուած է 1890 տարւոյ Մասիս-ին մէջ, Երուսաղեմայ Մայրապետանոցը նկարագրելու առթիւ:

* * *

Ուսումնական Խորհուրդն իւր նախընթաց օրուան նիստին մէջ նկատողութեան առնլով Մալաթեան Գալուստ էֆէնտի ներկայացուցած Կենդանական բնախօսութիւն անուն աշխատասիրութիւնն, իւր անդամակիցներէ միոյն յանձնած է զայն ի քննութիւն:

Խորհուրդը նոյնպէս որոշած է ֆրանսերէնի համար ուսուցչութեան վկայական տալ Եէնիգաբուցի Գույումճեան Յարութիւն էֆէնտիի և հայերէնի ու օսմաներէնի համար՝ Աֆիոն Գարահիսարցի Պօտուրեան Կարապետ էֆէնտիի:

* * *

Գեր. Մելքիսեդեկ արքեպիսկոպոս Մուրատեանց հիմայից երկասիրութիւն մը ի լոյս ընծայած է, Հովուական Աստուածաբանութիւն, երանաշնորհ Ներսէս Ե. Աշտարակեցի Կաթողիկոսի յիշատակին նուիրեալ: Մուրատեան Սրբազանի սոյն գործը՝ իւր պարունակութեամբ ու դասաւորութեամբ՝ գլխաւորապէս կը վերաբերի եկեղեցականաց և Դասագիրք մըն է իսկապէս հովուական պաշտօնի փափագողաց ու պատրաստուողաց համար: Բայց, ինչպէս կըսէ Գեր. Հեղինակն իր Յառաջաբանին մէջ, ամեն ընթերցողք կարող են օգուտ քաղել, քանզի կան քրիստոնէական պարտքեր որք իրարմէ անբաժան են թէ՛ հովուին և թէ՛ հօտին համար:

Պերպերեան տպարանէն մաքուր տպագրութեամբ ի լոյս ընծայուած գեղեցիկ հատոր մըն է 318 մեծադիր-ութածալ երեսներով:

Սրբազան Եփ. Այվազեան այս տարի շարունակած է հրատարակել Մասիս-ի շաբաթաթերթին մէջ հետեւեալ կենսագրականներն, Ջէննէ-Պօղոս.— Մատթէոս-Դպիր.— Մեծ Հինքեարպէյենտեան Տ. Յովհաննէս քահանայ.— Պարացի Տիրացու-Միքայէլ.— Գէորգ-Պատուելի Պալատեցի.— Բիմեճի Տէր-Երեմիա.— Յարութիւն վարդապետ Ալամդարեանց.— Քանաքեռցի Խաչատուր.— Յակոբ-Շահան-Ջրպետ:

Նոյն թերթի վաղուան թուով պիտի հրատարակէ նաեւ՝ դարուս սկիզբներն երեւցող և գրեթէ ամեն Հայու [illegible] մի անձնաւորութեան՝ այն է, Հայ գրավաճառութեան հիմնադիր ՄԱՐԳԱՐԱՅ կենսագրութիւնը, խիստ հետաքրքրական տեղեկութեամբ և ծանօթագրութեամբ՝ որ իրեն յատուկ է:

Այս առթիւ Այվազեան Եփ. այնպիսի երեւելի անձնաւորութիւններ ի վեր կը բերէ, որք ցարդ ժամանակակից անգիր պատմութեան վերապահուած էին:

* * *

Հրկիզեալ Նոր Թատրոնի չայրած մասը, Փուայէն, տակի 3 խանութներն, ի բաց առեալ հիմերն են. 37,500 ֆրանքի ապահովագրեալ է, հոկտ. 7/19ին, Իւնիոն Ֆռանսէզ ընկերութեան, °/₀ 37½ սանդիմ:

* * *

ՄԱՍԻՍ

Մասիս պիտի հրատարակուի վաղը հետեւեալ բովանդակութեամբ.

ՌՈՒՍԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ	ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ
ԵՐԿՈՒ ՆԱՄԱԿՆԵՐ	ՕՏԵԱՆ ԵՒ ՌԱՊԻՒՍՕՆ
ՄԵՐ ԱՐԴԻ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻՆ ՑԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ	ԳԱՌՆԻԿ ՖՆՏՔԼԵԱՆ
ԻԼԻԱ	ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ
ԼԵՐԱՆ ՇԱՂԻԿ (հին ժամանակի պատմութիւն)	ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆ
ՌՈՒՍԻՆԵԱՆ (իր կեանքն ու գործերը)	ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ
ԱՌՎԷՐԻ ՀՆՁԵԱԿԸ (Թարգմանութիւն)	ԳԱՌՆԻԿ ՖՆՏՔԼԵԱՆ
ՄԵՐ ՀՈՐԻԶՈՆԻՆ ՎՐԱՅ	ՄՈԼՈՐԱԿ

Ներքին լուրեր

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ.— Արչիպեղագոսի կղզեաց Նահանգին Սաղիրէ գաւառակին գայմագամ անուանեցաւ Ահմէտ Ղալիպ էֆէնտի, Նախկին շրջանաւարտ Միւլքիյէ վարժարանին:

Սանիյէ Միւթէմմիզի աստիճան տրուեցաւ կայս. անձնապահ զօրաբանակի պիտոյից չորրորդ ճիւղին տնօրէն Հաճի Սիւլէյման էֆէնտիի և Սպարապետի Դրան ընդհանուր պիտոյից երկրորդ ճիւղին գեր-տնօրէն Սալահէտտին էֆէնտիի:

Սանիյէի երկրորդ աստիճան՝ Միւլքի թղթակցութեանց տնօրէն Ֆաիգ պէյի, Սպարապետի Դրան հետեւակ զօրաց դիւանի թղթակցութեանց քարտուղարներէն Ռիւշտի պէյի, Ատանայի Նահանգին թղթակցութեանց դիւանին գեր-տնօրէն Զաքիր էֆէնտիի և Եանեայի Նահանգին կեդրոնական բժիշկ Ապտիւլքերիմ էֆէնտիի:

Երկրորդ կարգի Օսմանիյէ պատուանշան տրուեցաւ Ահմէտ փաշայի, որդի վախճանեալ Շէրիֆ Ապտիւլմաթլէպ էֆէնտիի:

Չորրորդ կարգի Օսմանիյէ՝ Մանաստըրի Նահանգին Մէքթուպճի Գատրի էֆէնտիի:

Երրորդ կարգի Մէճիտիյէ՝ Յունաստանի Արտաքին գործոց Նախարարութեան պաշտօնեաներէ Պ. Ալման Թօնթէնի, որ նախապէս վարած է Եանեայի հելլենական փոխ-հիւպատոսութեան պաշտօնը:

Չորրորդ կարգի Օսմանիյէ՝ Պաղտատի Հինտիյէ գաւառակին գայմագամ Բէշիր էֆէնտիի:

Հինգերորդ կարգի Մէճիտիյէ՝ առաջնակարգ վաճառական Կեսարացի Գազազեան Կարապետ էֆէնտիի և Կղզիներու ոստիկաններէն Մէհմէտ Ալի էֆէնտիի:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՋԵԿՈՒՑՄՈՒՆՔ.— Հնտախտի դէպքերու վրայ Առողջապահական վարչութիւնը հետեւեալ տեղեկագիրը մատուցած է կայս. պալատան առաջին քարտուղարութեան.

Ռէշթի օսմանեան հիւպատոսին, Թէհրանի առողջապահական բժիշկին և Կարնոյ ու Հօտէյտայի առողջապահական պաշտօնէից կողմէ եկած հեռագիրք կը ծանուցանեն թէ հոկտեմբեր 7ին ի Ռէշթ հնտախտի 22 դէպքեր ու 15 մահեր պատահած են և շրջակայից մէջ տակաւին ցանուցիր դէպքեր կը պատահին: Սփահանի մէջ՝ սեպտեմբեր 21էն հոկտեմբեր 5, 130 դէպք ու 42 մահ: Կասպից ծովուն եզերքը ռուսական ու պարսկական սահմանագլխոյն վրայ գտնուած Թալիշ անուն տեղն հնտախտ ծագելով օրական 150 դէպքեր ու 50 մահեր կը պատահին:

Հոկտեմբեր 7ին ի Կարին 5 դէպք ու 4 մահ: Հօտէյտայի մէջ տասն օրէ ի վեր ո և է դէպք չէ պատահած: Երէկ գիշեր երկաթուղւոյ կառախումբով ի Ճիսրը Մուսթաֆա փաշա՝ 311 ուղեւորներ ժամներ ու քարանթինայի ենթարկուեր են: Քարանթինայի պայմանաժամն աւարտող 6 ուղեւորներ ազատ անցագիր ստացած են: Թէ՛ այդ մաքրանոցին, թէ՛ Տէվէ Պաղըրտանի մաքրանոցին մէջ գտնուող 400՝ ու Վինտքոյի մաքրանոցին մէջ գտնուող 14 ուղեւորաց առողջական վիճակը գոհացուցիչ է: Վանայ նահանգին մէջ եւս հանրային առողջութիւնը գոհացուցիչ վիճակի մէջ է: Հոկտեմբեր 7ին ի Սինոպ քարանթինա սպասող 363 նաւաստեաց և 731 ուղեւորաց ինչպէս նաև քարանթինայի պահապան զինուորաց առողջական վիճակն և Սինոպի ու շրջակայից մէջ հանրային առողջութիւնը գոհացուցիչ են: Ի Գավագ քարանթինա սպասող 610 նաւաստեաց առողջական վիճակը գոհացուցիչ է:

ՆԱԽԱԳԱՀ
Առողջապահական Ժողովոյ

8 հոկտեմբեր

—Եէմէնի կուսակալը հոկտեմբեր 6ին հեռագրած է թէ Սեպտեմբեր 21էն ի վեր ի Գամարան՝ և նոյն ամսոյ 27էն ի վեր ի Հօտէյտա հնտախտի դէպք ու մահ չէ պատահած և Նահանգին միւս կողմերուն մէջ հանրային առողջութիւնը գոհացուցիչ է:

—Տրապիզոնի կուսակալը հոկտեմբեր 8ին հեռագրած է թէ Նահանգին ամեն կողմն ու Բլաթանայ և Խուբէի մաքրանոցներուն մէջ տարափոխիկ հիւանդութեանց ո և է դէպք չէ պատահած և թէ Խուբէի քարանթինայի շըղթային պահապան զինուորաց ու ոստիկան-զինուորաց առողջական վիճակը գոհացուցիչ է:

—Սինոպի մաքրանոցին վերատեսուչը նոյն թուականաւ հեռագրած է թէ Օտեսայէ եկող Նովէլէֆ անուն շոգենաւի ուղեւորներէ կին մը և նախորդ օրն ալ ուրիշ ուղեւոր մը հիւանդանալով բժշկական քննութեան ենթարկուեր են: Բժիշկները տեղեկագրեր են թէ այդ անձինք պարզ փորհարութեան, փսխելու և տենդի ենթակայ են, հետեւաբար յատուկ հիւանդանոցը տարուեր են, ուր կը դարմանուին և հսկողութեան ներքեւ առնուած են:

—Կայս. Իրատէ մը հրամայած է հազար հինգ հարիւր ղրուշի հանգստեան թոշակ յատկացնել Տէօէ Աղաճի նախորդ կառավարիչ Պէհաէտտին պէյի:

ԻՆ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏ.— Բարձր. Մեծ-Եպարքոսը, Բարձր. Սպարապետն և Ներքին գործոց վսեմ. Նախարարն երէկ կայս. պալատ երթալով ստացան վեհ. Սուլթանի հրամանները:

Ի Բ. ԴՈՒՌՆ.—Բարձր. Մեծ-Եպարքոսը, Ներքին ու Դատական գործոց վսեմ. նախարարներն և եպարքոսական խորհրդական Թէվֆիգ պէյ երէկ խորհրդակցութիւն մը կատարեցին ինչ ինչ խնդրոց վրայ:

—Հելլենական դեսպան Պ. Մավրոկորտաթօ երէկ Բ. Դուռն երթալով տեսակցեցաւ Բարձր. Մեծ-Եպարքոսին, Արտաքին գործոց վսեմ. նախարարին և վսեմ. խորհրդականին հետ:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ Անկելանոցին շինութեան համար կազմեալ յանձնաժողովը նկատելով որ շէնքին կառուցման համար ուրիշ յանձնառու մը ներկայացած չէ, որոշած է այդ շէնքի կառուցումը 58,500 ոսկւոյ վերջնապէս յանձնել ծովային գործոց նախարարութեան ճարտարապետ Վասիլաքի էֆէնտիի: Նախարարաց Խորհուրդն եւս յետ քննութեան այդ որոշումն ընդունելի գտնելով տեղեկագիր մը պատրաստած եւ մատուցած է վեհ. Սուլթանին:

ՅՈՒՆԱՑ Պատրիարքարանն որոշած էր երկու հազար ոսկւոյ փոխառութիւն մ՚ընել վճարելու համար Պատրիարքարանի պաշտօնէից առկախ մնացած ութ ամսականներու երեքը: Այդ գումարը տարեկան եօթն առ հարիւր տոկոսով փոխ տուող մը չգտնուելով, որոշուեր է Պ. Քօնսթանթէն Ռալլիէն ընել այդ փոխառութիւնը՝ տարեկան ութ առ հարիւր տոկոսով:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ.— Կարինէն կը գրեն թէ կուսակալ Հայտար փաշա անձամբ կը հսկէ առողջապահական այն միջոցներուն վրայ որք ի գործ կը դրուին վեհ. Սուլթանի հրամաններուն համաձայն: Ն. Վսեմութիւն հիւանդանոցներն այցելելով հիւանդաց որպիսութիւնը կը հարցնէ: Ձեռք առնուած ազդու միջոցներու շնորհիւ հնտախտն այնչափ սաստկութեամբ չճարակիր:

Զինուորական երեք բժիշկներ և դեղեր պիտի ղրկուին ի Կարին: Բժիշկներն երէկ ստացան իրենց ճամբու ծախքն և առաջին առթիւ Կարին պիտի ուղեւորին:

—Սերպիոյ և Պուլկարիոյ սահմանագլխոյն վրայ գտնուած այլ եւ այլ տեղերու մէջ հնտախտ ծագած ըլլալով, Պուլկար կառավարութիւնն որոշած է արգելուլ սահմանագլխոյն վրայ ըլլալիք երթեւեկութիւններն՝ ի բաց առեալ Զարիպրոտն, ուր մաքրանոց մը կայ, և Վիտինի սահմանագլխոյն վրայ որոշելի տեղ մը, ուր մաքրանոց մը պիտի հաստատուի:

—Երէկ, Ճիսրը Մուսթաֆա փաշայի մաքրանոցը 266 իսլամ գաղթականներ ժամանելով Արեւելեան Ռումելիէն՝ քարանթինայի ենթարկուեր են:

Մաքրանոցներու մէջ գտնուող աղքատ հիւանդաց օգնելու համար վեհ. Սուլթանին բարձր հովանաւորութեամբ կազմեալ յանձնաժողովն յատուկ պաշտօնէի մը հետ ուտեստ և հագուստ պիտի ղրկէ այդ մաքրանոցը՝ բաշխելու համար այդ գաղթականաց, որոց մեծ մասը աղքատ է:

—Երզնկայէ կը հեռագրեն թէ Աշգալէի մէկ քանի գիւղերուն մէջ հնտախտ ծագած ըլլալով, Եէնիքէօյի մաքրանոցը Քիւքիւրթլի՝ և Աշգալէի մաքրանոցն ալ Բէնէգլան փոխադրուեր են, Երզնկա-Բաբերդի ճամբան ամբողջովին պահպանելու և փախուստի տեղի չտալու համար: Ի Եէնիքէօյ զինուորական ջոկատ մը հաստատուեր է և այլ և այլ կէտերու վրայ տասնական, տասներկուքական զինուորներ ղրկուած են մէկ մէկ սպայի հրամանատարութեամբ:

—Մարսիլիոյ մէջ մէկ քանի օրէ ի վեր հնտախտի դէպքերն աւելցած ըլլալով, բոլոր հիւանդանոցք պատրաստ վիճակի մը մէջ դրուեր են հնտախտաւորներ ընդունելու համար:

—Կայս. պալատան քիմիագէտ Պօնքովսքի պէյ երկու բժիշկներով երէկ մայրաքաղաքէս ուղեւորեցաւ ի Զմիւռնիա և ի Սէլանիկ, այդ տեղերու հանրային մաքրութեան և առողջապահական վիճակը քննելու համար:

Պօնքովսքի պէյ ու երկու բժիշկները նախընթաց օր Բարձր. Մեծ-Եպարքոսին ներկայանալով իրենց պաշտօնին վերաբերեալ հրահանգներն ստացան: Պօնքովսքի պէյ իւր հետեւորդաց հետ ի պահանջել հարկին Զէյթէֆչէ եւս պիտի երթայ:

ՇԻՐՔԷԹԻ Խայրիէի բաժնետերաց տարեկան ժողովը՝ կայս. Իրատէով մը շնորհեալ արտօնութեան համաձայն՝ ի մօտոյ ի նիստ պիտի գումարի, հաշիւներն ու գործառնութիւնները քննելու համար:

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ Սնտուկին համար Պետական Խորհրդոյ կողմէ պատրաստուած տեղեկագիրն, որ կը վերաբերի նոյն Սնտուկին կողմէ վագֆ կալուածոց փոխարէն փոխատուութիւն ընելու խնդրոյն, այժմ կը քննուի Նախարարաց Խորհրդոյ կողմէ և ի մօտոյ տեղեկագիր մը պատրաստուելով պիտի մատուցուի վեհ. Սուլթանին:

ՀԱՄԱԺՈՂՈՎՔ.— Ամերիկեան կառավարութիւնն հրաւէր ուղղած է օսմ. կայս. կառավարութեան՝ մասնակցելու Պրիւսէլի դրամական համաժողովին որ պիտի գումարի Նոյեմբեր 10/22ին:

—1893 սեպտ. 24էն մինչեւ հոկտ. 1 Հռոմի մէջ գումարելի բժշկական միջազգային համաժողովին մասնակցելու համար՝ Թուրքիոյ բժշկական մարմնոյն եւս հրաւէր ուղղուած է պատուիրակութիւն մը կազմելու. Տօքթ. Միլինճէն, որուն յանձնուած է այս պատուիրակութիւնը կազմելու պաշտօնը, հրաւէր կը կարդայ մայրաքաղաքիս և գաւառաց այն բժիշկներուն որք կ՚ուզեն մասնակցիլ, հաղորդել իրեն:

ՀԱԼՔԱԼԸՒ երկրագործական վարժարանի ուսմանց ծրագրոյն վրայ՝ երկրագործութեան արուեստին արդի յառաջդիմութեանց համապատասխանող նոր դասեր եւս աւելցուած են:

ՀԱՆՐՕԳՈՒՏ շինութեանց Նախարարութիւնը գրած է Այտընի կուսակալութեան որ որթալուճի համար չամիչներէ առնուելիք տուրքը, միայն նաւահանգիստներու մէջ առնուի:

ԷՄԻՆ ԷՖԷՆՏԻ, անդամ Եղեռնադատ ատենին, երէկ մեռաւ: Էմին էֆէնտի հանգստեան կոչուած և ժամանակէ մը ի վեր հիւանդ էր:

ՄԻ՛ ԾՏԱՊԷՔ.—Նախընթաց օր Ոսկեղջիւրի Թիւ 4 շոգենաւը Էյուպէն ելնելով Հալըճըօղլուի Նաւամատոյցին կը մօտենար, ուր կեցող պառաւ հրէուհի մը՝ կերեւի թէ շատ կայնած ըլլալուն յոգնելով՝ կը շտապէր ժամ առաջ շոգենաւ նետուիլ. Նաւապետը, նաւաստիները կը պօռային որ չի ցատքէ. քաջասիրտ պառաւը՝ առ ոչինչ գրելով իրեն ուղղուած ազդարարութիւնները՝ ոստում մը կ՚ընէ, բայց թոյլ սրունքներ, կը կթոտին, կերերան և խեղճ պառաւը երեսի վրայ կիյնայ՝ մարմնոյն մէկ մասը շոգենաւին մէջ, միւս մասը դուրս կախուած, այնպէս որ եթէ շոգենաւը նաւամատոյցին դպչէր, անպատճառ պիտի փշրէր խորտակէր անոր սրունքները: Վերջապէս կը յաջողին այդ վերահաս վտանգէն ազատել հրէուհին, որ միտքը դրած է ասկից ետքը շոգենաւ մտած պահուն չշտապել:

Առաջին անգամը չէ որ սանկ դէպք մը կը պատահի. շատ անգամ ոտքեր կոտրած, սրունքներ ջախջախուած են մի միայն անոր համար որ անխորհուրդ աճապարանք մը կայ շոգենաւ մտնող ելնողներուն քով. ի՛նչ իրարանցում, ի՛նչ խառնափնթորութիւն, ի՛նչ հրմշտկում երբ շոգենաւ մը նաւամատոյցի մը կը մօտենայ. ընդհանուր անհամբերութենէ մը բռնուած է ամեն մարդ, ոչ ոք կը ներէ որ իրմէ առաջ մէկն անցնի, ինք կուզէ առաջին անգամ ոտք դնել նաւամատոյցին վրայ իբրեւ Գոլոմպոս մը որ Ամերիկայի հողին վրայ նոր ոտք կը կոխէ: Հետեւապէս մի՛ շտապէք երբ շոգենաւ մտնէք կամ անկից դուրս ելնէք:

22 ՕՐ ՓՈԽԱՆԱԿ 8 ԺԱՄՈՒ.—Քարանթինան ալ իր զուարթ կողմերն ունի. մարդուն մէկը, Ժիւլ-Վէռնի դիւցազանց կարգը դասուելու արժանի, Պաթումէն ճամբայ կելնէ Տրապիզոն երթալու համար. այս երկու նաւահանգիստներուն հեռաւորութիւնն է 10 մղոն զոր առ առաւելն ութ ժամէն կարելի է կտրել, բայց մեր դիւցազնը քսան երկու օրէն կատարած է այս փոքրիկ ուղեւորութիւնը. տեսէք ինչպէս. Պաթումէն ուղղակի Օտեսա կ՚երթայ, Օտեսայէն Սինոպ կ՚անցնի, ուր կը մաքրէ իր քարանթինան. յետոյ, Սինոպէն շոգենաւ կը նստի և ուղղակի մայրաքաղաք կուգայ. մայրաքաղաքէս ճամբայ կ՚ելնէ, բայց այս անգամ ուղղակի Տրապիզոն կ՚երթայ, ուր, կ՚ըսեն, ողջ առողջ հասեր է:

Ինչո՞ւ այս մանուածապատ ուղեւորութիւնը. վասն զի հնտախտի ծագման պատճառով Պաթումի և Տրապիզոնի միջեւ շոգենաւերու երթեւեկութիւնը դադրեցուցուած էր:

ԱՐԿԱԾՔ.— Չորեքշաբթի օրը ծագած փոթորկի պահուն ի Գատըգիւղ Սէօյիւտլի Չէշմէի շրջակայքը Մահմուտ էֆէնտիի տանը վրայ կայծակ իյնելով, կարասինները գրեթէ ամբողջովին այրեր և տանը մէկ մասն ալ մեծապէս վնասուեր է: Մահմուտ էֆէնտիի աչքերը վնասուեր են եւ կինն, որ յղի էր, հիւանդացեր է:

—Անգլիական «Ձօն» շոգենաւին մէջ երէկ ապրանք դուրս հանուած պահուն, նաւաստիներէ միոյն ձեռքը մեքենային մէջ մնալով դաստակէն բաժնուեցաւ: Վիրաւորեալն անմիջապէս հիւանդանոց փոխադրուեցաւ:

—Չորեքշաբթի օրուան փոթորկի պահուն Սեւ ծովու նեղուցին մօտ փոքր նաւ մը ընկղմեր է, սակայն մէջը գտնուողներն ազատուեր են:

ԱՒՍՏՐԻԱԿԱՆ դեսպան Պառոն Ֆօն Քալիչէ որ արձակուրդով Վիեննա կը գտնուէր, յառաջիկայ երկուշաբթի մայրաքաղաքս կը դառնայ: Ն. Վսեմութիւն այս պահուս Քորֆու կը գտնուի ուր քարանթինա կը սպասէ:

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ դեսպան Ռատօլին իշխանը չորեքշաբթի օրը Կալաձէն Վիեննա ուղեւորեր է իր կնոջ հետ և անտի մայրաքաղաքս կուգայ իր պաշտօնի գլուխն անցնելու:

ՍՊԱՆԻԱԿԱՆ դեսպան Ռիւաթա մարքիզը, որուն յանձնուած է նաեւ Աթէնքի դեսպանութիւնը, նախընթաց օր մեկնեցաւ Կ. Պոլսէն դէպ ի հելլենական մայրաքաղաքն, իր յանձնարարագրերը մատուցանելու համար Եօրկիոս թագաւորին:

ՇԻՔԱԿՕ.—Սուլթան Ահմէտի կոթողին քարէ մէկ օրինակը պիտի ղրկուի Շիքակոյի ցուցահանդէսին օսմ. բաժնին: «Լ. Հէրըլտ» կիմանայ թէ նախորդ շաբթուն Շիքակօ ուղեւորեր են տասնեւմէկ բեռնակիրք, որոց եօթն՝ հայ, և չորսն հրեայ: Հայերը հագուած են Բաղէշի գիւղացիներուն տարազովը: Իրենց գդակներուն վրայ անգլիարէն լեզուով բանուած է իրենց արհեստին ինչ ըլլալը:

ԳԱՌԱԳԵՂ.—Խե՜ղճ Պ. Մօնթենէկրօ, Գատըգիւղէն վտարուեցաւ իր գազանաբարձ կառքերէն բուրած անախորժ հոտին և արձակուած խլացուցիչ աղմուկներուն համար: Եւ գացած առանձնացած էր հիւրընկալ Սկիւտարի մէկ անկիւնն՝ անդորր կեանք մը վարելու համար. բայց յուսախաբ եղաւ. իր կենդանիներն իրեն պէս խօսք չէին կրնար հասկնալ և իրենց ամենէն սաստիկ մռնչիւնները կ՚արձակէին եւ մանաւանդ բնաւ կարելի չէր առաջքն առնուլ այն բուրումներուն որք կը բխէին անոնց վրայէն. մէկ օր, երկու օր, շաբաթ մը, երկու շաբաթ, վերջապէս ամիս մը. ա՛լ մարդոց համբերութիւնը կը սպառի, բողոք, գանգատ իրարու վրայ կը տեղան, ամենէն անզգայ ականջներն ալ կը նեղուին, ամենէն բիրտ քիթերն ալ կը խռղտան: Ահա այս պատճառով հիմակ Պ. Մօնթենէկրօ պիտի հանուի իր այդ նոր բանակետղէն ալ:

ԲԷԴՐՕ.—Ֆէնէր Պաղչէի Պէլ-Վիւ օթէլին սպասաւոր Բէդրօ, որ տիկին Աբիկեանի գոհարեղէնները գողնալով փախած էր, երկուշաբթի իրիկուն ձերբակալուեցաւ, ինչպէս արդէն ծանուցինք, Պիրէոն մեկնող ռուսական շոգենաւի մը մէջէն: Բէդրօ Վոյվոտայի պահականոցը տարուելով, բացարձակ լռութիւն պահեց և տասն չորս ժամ բերանը չի բացաւ: Յաջորդ օրը Կալաթա Սէրայի ոստիկանատունը տարուելով, հարցաքննուեցաւ խուզարկիչ պաշտօնեայ Թահսին էֆէնտիի կողմէ, որ յաջողեցաւ մէկ ու կէս ժամուան մէջ խոստովանցնել տալ նմա իր գողութիւնը: Բէդրօ ըսաւ թէ արդարեւ ինք գործած էր զայն, բայց գողցած գոհարեղէնները վեց ոսկւոյ փոխարէն գրաւ դրած էր Խրիսթօ անուն մարդու մը քով: Նոյն օրն իսկ ձերբակալուեցաւ Խրիսթօ: Շատ հաւանական է որ գոհարեղէնները ամբողջապէս ձեռք անցուին:

ԳՈՂՈՒԹԵԱՆ ՓՈՐՁ ՄԸ կատարուեցաւ առջի գիշերը Պոլսոյ Մեծ Շուկայի Ճէվահիր Պէտէսթէնիին մէջ. մարդ մը ցերեկը նոյն Պէտէսթէնը գտնուած մզկիթին մէջ պահուըտելով, գիշերուան ժամ 7ին դուրս ելաւ և սկսաւ դարանները խառնել: Պահապանք անմիջապէս վրայ հասնելով ձերբակալեցին զայն առանց ժամանակ տալու որ բան մը գողնայ: Յետ քննութեան հաստատուեցաւ թէ այդ անձ Տէլվիշ անուն վաղեմի չարագործ մ՚է որ նախապէս գողութեան համար դատապարտութիւն կրած էր:

ԲԱՆՏԱՐԿԵԱԼՔ.—Կայս. Իրատէ մը հրամայած է որ մայրաքաղաքիս ու շրջակայից բանտերուն մէջ գտնուող բոլոր բանտարկելոց լուսանկարներն առնուին:

ՀԵՌԱԳԻՐ
ԱՅՍ ՕՐՈՒԱՆ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՀԱՇՈՒԵԿՇԻՌ ԱՆԳԼԻՈՅ ՊԱՆՔԱՅԻՆ

Անգլիոյ Պանքային երէկ հինգշաբթի (20 հոկտեմ.) հրատարակեալ շաբաթական հաշուեկշիռն հետեւեալ տարբերութիւնները կը ցուցնէ, բաղդատմամբ անցեալ շաբթուան:

Պատրաստ մետաղադրամէն պակսած է 865 հազար անգլ. ոսկի:

Պանքատոմսերու պահեստին վրայ աւելցած է 302 հազար ոսկի:

Գանձելի փոխանակագրաց և այլ առեւտրական թղթոց մթերքէն պակսած է 442 հազար անգլ. ոսկի:

Հետեւապէս, Անգլիոյ Պանքային դիրքը վերջին եօթնեկին մէջ մեծ տարբերութիւն մը չի ցուցներ քանի որ իւր պահեստք այժմ այնպէս կը համեմատին իւր յանձնառութեանց ինչպէս 40 11/16 կը համեմատի առ հարիւր: Նախորդ շաբթուան համեմատութիւնն էր 41 ¾ առ հարիւր:

Այս պայմանաց մէջ, Անգլիոյ Պանքային Տնօրէն Խորհուրդն իւր երէկի հինգշաբթի աւուր նստին մէջ որոշեց զեղչի սակը 100ին 2էն 3ի բարձրացնել:

ՍՕՖԻԱ, 20 Հոկտ.—Ռումանիայէն եկողներու քառանդինան ութ օրէն հինգի իջաւ:

ԱԹԷՆՔ.—Ռումանիոյ գործակատարը գրաւորապէս ծանոյց իւր պաշտօնէ դադրիլն, Յունաստանի և Ռումանիոյ միջեւ յարաբերութեանց խզմամբ: Ռուման հիւպատոսք եւս դադրեցան իրենց պաշտօնէն: Կառավարութիւնը պիտի ջանայ միջազգային եղանակաւ կարգադրել Ռումանիոյ հելլէն հպատակաց շահերը:

ԼՈՆՏՈՆ.—Անգլիոյ Պանքան իւր զեղչի սակն °/₀ 2էն 3 °/₀ ի բարձրացուց:

ՊՈՒՔՐԷՇ.— Հունգարիոյ սահմանաց վրայ քառանդինան ութէն հինգ օրուան իջաւ: Սուլինայի և Զաթալ Քիլիի քառանդինան կը մնայ 11 օր:

Սակարան

ՂԱԼԱԹԻԱ, 9 Հոկտեմբեր

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՑ

3 ամիս Լոնտրայի վրայ		110
3 » Փարիզի »		22 90

ՕՍՄԱՆԵԱՆ ՔՕՆՍՕԼԻՏԷ

Երէկ իրիկոյ գոց. [Միաց. Դ. Սէրի]		23 39
Բիրայի մէջ	»	— —
Առաւօտուն բացուեցաւ	»	24 04
Կէս օրին		24 05½
Թահվիլաթը Օսմանիյէ երէկ երեկոյ		82 38
» » ժամ 5ին		83 08

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՂԹՈՑ

Փոխառութիւն	Սէրի	54 ¾
»		31
»		24 06

ԲԱԺՆԵՏՈՄՍՔ

Սօսիէթէ Ժէնէրալ	Անգլ. Լր.	5 10
Քրէտի Ժէնէրալ	» »	8
Պանք տը Քօնս.	» »	5
Սօս. Շանժ է վալէօր	» »	4 20
Ռէժի	» »	16 23
Թրամուէյ	» »	605
Ռումէլիի Երկաթուղի	ֆր.	94 ¼
Բաժնեթուղթ Լաւրիօնի		85

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ

Օսմանեան ոսկի	ղրշ.	100
20 ֆրանքնոց	»	87 25
Անգլիական ոսկի	»	110 15
Մարք Գերմանական ոսկի	»	107 20
Իմբէրիալ	»	89 35
Քրիմբզ	»	51 20
Ռուպլ Թղթադրամ	»	9 08
Մէճ. արծաթ [տարբ.]	»	107 10
Մանր արծաթ	»	101
Մէթալիք	»	98 20
Թասֆիյէ	»	— —
Տոկոս Ղալաթիոյ Սակարանի	»	5

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

ՓԱՐԻԶ, 20 Հոկտեմբեր

Ֆրանսական Ռանթ 3 °/₀	99 15
» » 4 ½ °/₀	106 02½
Օսմանեան քօնսօլիտէ Սէրի Դ.	21 87½
Օսմ. մաքս. արժեթուղթ	472 50
Բրիօրիթէ Թիւրք (1890)	428 75
Օսմանեան Երկաթուղի	94 12½
» Ռէժիի բաժնեթուղթք	376 25
Պանք Օթօման	595
Քրէտի Լիօնէ	781 25
Իտալական Ռանթ 5 °/₀	92 12½
Եգիպտական միացեալ	500
Չէք Լոնտրայի վրայ	25 18
Օսմանիյէ Օսմանեան քօնսօլիտէ)	381 25

ԼՈՆՏՈՆ, 20

Անգլ. քօնսօլիտէ	96 81
Օսմ. » Սէրի Դ.	21 50
» » » Ա.	54 ¾
» » » Բ.	31
» » » Գ.	22 ½
Օսմ. փոխառութիւն 1871	95 ¾
Փոխառութիւն 1877 (Տէֆանս Լօն)	92 ½
Պանք Օթօման	13 7/8
Այտընի երկաթուղի	20 ½
Կասապայի երկաթուղի	12
Եգիպտական միացեալ (Իւնիֆիյէ)	99 ¼
» առանձ. (բրիվիլէժիէ) 1890	102 ¾
Տօմանիալ (փոխառ. Ռոչիլտ)	105 ½
Փոխանակութիւն Փարիզի վրայ	25 374

ՎԻԵՆՆԱ, 20

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	119 95
» Փարիզի »	47 55
Օսմանեան Ռէժիի բաժնեթուղթք	176 25
» Երկաթուղի	45 20

ՊԵՐԼԻՆ, 20

Օսմանեան Երկաթուղի	92
Օսմ. Ռէժի	190 70
Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	20 270
» Փարիզի »	80 60

ՓԱՐԻԶ ՓԹԻԹ ՊՈՒՐՍ

ՓԱՐԻԶ, 19

Ֆրանսական Ռանթ 3 °/₀	99 25
Եգիպտական միացեալ	500
Օսմ. քօնսօլիտէ Սէրի Դ.	22 07½
Օսմ. երկաթուղի	94 25
Օսմ. Ռէժի	377 50
Օսմ. մաքս. արժեթուղթ	472 50
Բրիօրիթէ Թիւրք	428 75
Պանք Օթօման	597 50
Օսմանիյէ	— —

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԴՐԱՄԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Ոսկւոյ խնդրանքը կը շարունակէ Անգլիոյ մէջ. միայն Անգլիոյ Պանքայէն 245,000 անգլիական ոսկի քաշուեցաւ անցեալ շաբթու. սոյն գումարին 180,000ը Եգիպտոսի, 40,000ը Բօրէնհակի՝ և մնացեալ 25,000ն ալ Ռումանիոյ համար է, սա ալ ստոյգ է սակայն որ Ափրիկէէն և Արեւելեան երկիրներէն մեծ քանակութեամբ ոսկի ներածուած է միեւնոյն շաբթուն. այսպէս, Հարաւային Ափրիկէէն՝ 135,000 անգլիական ոսկի, Պօմպայէն՝ 121,000, Շանկհայէն՝ 14,200, Արեւմտեան Հնդկաստանէն՝ 30,000, Ճաբոնէն՝ 18,000 և Վալբարէզօէն՝ 5000—համագումար՝ 323,200 անգլիական ոսկի: Ինչպէս կը տեսնուի՝ Անգլիոյ Պանքային անցեալ շաբթուան հաշուեկշիռը 78,200 ոսկւոյ մետաղադրամի առաւելութիւն մը ցոյց կուտայ նախընթաց շաբթուան վրայ. այս պայմաններուն մէջ՝ հրապարակին դրամագեղչի սակը թէպէտ թոյլ ըլլալ պէտք էր՝ սակայն միջնորդներու չափազանցեալ լուրերուն և ուրիշ վարպետ միջոցներուն պատճառաւ՝ նախընթաց շաբթուընէ աւելի հաստատուն մնաց. այնպէս որ երեք ամսուան պայմանաժամով Պանքայի փոխանակագրերն անգամ 1°/o էն պակասի չի գեղչուեցան. չորս ամսուան պայմանաժամով թուղթերու դրամագեղչի սակը 1 1/8 °/o էն 1 1/4 °/o ի բարձրացաւ. վեցամսեայ պայմանաժամու սակին վրայ փոփոխութիւն չի կայ:

Արծաթի գինը կը շարունակէ բարձրանալ. նախընթաց շաբթուան գնէն 1/8 բէնս վրայ դրաւ. անցեալ շաբթու ներածուած արծաթն է 101,000 անգլիական ոսկի, իսկ արտածութիւնը՝ 187,000 ոսկի, որով մէկ շաբթուան մէջ 86,000 ոսկւոյ արծաթ պակսած է Անգլիոյ հրապարակէն. այս պարագան՝ արծաթի գնոյ բարձրացման նպաստեց:

* * *

ԱՐԺԷԹՈՒՂԹՔ

Ի ԼՈՆՏՐԱ.—Շաբթուան մէջ ամենէն շատ գործը հարաւային Ամերիկայի արժէթղթոց վրայ եղած է. այսպէս, Արժանթինի հանրապետութեան արժէթղթոց մեծագոյն մասը 1 1/4 էն մինչեւ 1 1/2 վրայ դրաւ. Պրազիլեան փոխառութիւնը՝ իւրաքանչիւր բաժնի վրայ 15էն 15 1/2 բէնս. Բէրուվիոյ արժէթղթերը ամենէն աւելի մեծ շարժում ցոյց տուած են. ընդհանրապէս յետախաղաց կամ յառաջախաղաց շարժումը 10 միութենէն անդին չէր անցներ այս թուղթերուն համար. բայց, ահա անցեալ շաբթու, մէկէն ի մէկ 40 միութիւն վրայ դրին. Ուրուկուէյի և Վէնէզուէլայի պետական արժէթուղթք եւս կոտորակաւոր յաւելումներ ունեցան:

Անգլիոյ պետական և մասնաւոր ընկերութեանց արժէթուղթք եւս վրայ դրած են. մասնաւոր խնդրանք կար Հնդկաստանի պետական արժէթղթոց համար, որոց գինը, արծաթի գնոյն յաւելման պատճառաւ, 1/4 ի յաւելում կրած է:

Եւրոպեան արժէթղթոց մէջ ամենէն աչքի զարնող յաւելումը օսմանեան արժէթղթերու վրայ է. ամէն անգամ որ Թուրքիոյ պետական արժէթուղթք վրայ կը դրնեն՝ Պանք Օթօմանն ալ այս պայմանէն կը նպաստաւորի. ճիշդ այս կերպով, անցեալ շաբթու, Պանք Օթօմանը 3/16 վրայ դնելով 14 3/16 ի գոցուեցաւ:

Ցունական արժէթուղթք ընդհակառակն յետախաղաց շարժում մը ունեցաւ. Ռանթերն 3/4, իսկ հինգ առ հարիւր տոկոսաբերք և Մօնօբօլներն 1/4 ինկան:

Հունգարական արժէթուղթք անփոփոխ են, իսկ Սպանիականք միայն կոտորակաւոր անկումներ կրեցին:

Ի ՓԱՐԻԶ.—Որքան որ ալ շահադիտական մեծ գործեր չեղան՝ բայց և այնպէս հրապարակը հաստատուն էր. պետական արժէթուղթք կոտորակաւոր յաւելումներով գոցուեցան. օտար արժէթղթոց մէջ՝ ամենէն աւելի Օսմանեան և ռուսական արժէթուղթերն ուշադրութիւն գրաւեցին. և ի մասնաւորի, Ռուսական արժէթուղթք շատ հաստատ քննուեցան՝ Պէրլինէն հասած նպաստաւոր լուրերուն պատճառաւ. լուր տարածուեցաւ թէ Գերմանիոյ և Ռուսիոյ միջեւ առեւտրական դաշնագրի մը կնքման համար սկսուած բանակցութիւնք քիչ ատենէն պիտի աւարտին: Փորթուկէզ պետական արժէթուղթք 1/4 °/o վրայ դրին. Պանք Օթօմանը՝ 5 ֆրանք, իսկ օսմ. ծխախոտի Րէժին 2.50 ֆրանք, բայց Սպանիական արժէթուղթերը ո՛չ միայն նոյնը չէ մնացին՝ այլ պզտիկ անկումներ ալ կրեցին:

Ի ՊԵՐԼԻՆ.—Պօրսան բացուած ատենը հրապարակը շատ անորոշ կացութեան մէջ էր անցեալ շաբթու. բայց շաբթուան ընթացքին մէջ տակաւ առ տակաւ բարւոքեցաւ. զրոյց տարածուեցաւ թէ երից կայսերաց տեսակցութիւն մը տեղի պիտի ունենայ ի մօտոյ. բայց լաւատեղեակ ակմբոյ մէջ, այս զրոյցին մեծ հաւատ չընծայուիր. օտար արժէթղթոց մեծագոյն մասը 1/8—1/4 °/o վրայ դրաւ. ի մասնաւորի օսմ. արժէթուղթք շատ հաստատ քննուեցան:

* * *

ԲԱՄԲԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿԸ

Անցեալ շաբթու 24,105 հակ բամբակ ներածուեցաւ ի Լիվրբուլ. պահեստը նախընթաց շաբթուան վրայ 48,700 հակ եւս նուազած է. որով, անցեալ տարուան 632,540 հակ պահեստին դէմ՝ հիմայ 1,051,020 հակ միայն մնացած է. գործարանք 61,882 հակ գնեցին. արտածողք՝ 2850 հակ, իսկ շահադէտք՝ 9770 հակ:

Գներու դարձեալ վրայ դրին. նախընթաց շաբթուան վրայ Ամերիկեան բամբակը 3/16 էն 1/4 բէնս, Պրազիլեանը՝ 1/16 էն 3/16 բէնս, իսկ Եգիպտականը՝ 1/16 էն 1/8 բէնս յաւելում կրած են. հրապարակը շատ ոգեւորուած էր:

Անգլիոյ մէջ շահադէտներու երկու գըլխաւոր բաժանում կայ. մէկ մասը, յոռետեսները, ամէն բանի վրայ անկում կամ գէթ անշարժութիւն կը գուշակեն, ասոնք կը կոչուին «արջ» (Bear). իսկ միւս դասակարգը, լաւատեսները, ամէն պարագայի մէջ յառաջխաղացութիւն, յաւելում կ'ընդունիմարեն, ասոնք ալ կը կոչուին «ցուլ» (Bull). ինչպէս կ'երեւայ՝ սոյն երկու դասակարգերը յիշեալ կենդանիներու քալելու եղանակաւը իրարմէ կը զանազանուին. մին դանդաղ՝ և միւսը արագաշարժ:

Արդ, վերջին շաբթուան մանաւանդ, «ցուլ»երը առիթ չեն փախցներ «արջ»երուն քթին խնդալու. և չափազանց հպարտացած են իրենց գուշակութիւնները իրականացած տեսնելով. հիմա «ցուլ»երը հաստատապէս կը պնդեն թէ այս տարուան ամբողջ հունձքը 7,000,000 հակէն աւելի չպիտի ըլլայ և հետեւաբար գները տակաւին շատ վրայ պիտի դնեն. իսկ յամառ «արջ»երը գլուխնին երերցնելով դանդաղօրէն կը պատասխանեն թէ տարւոյս հունձքը ոչ մէկ կերպով վար պիտի մնայ նախորդ տարուան հունձքէն, պատուական արդիւնք պիտի ունենանք, կ'ըսեն, պատուակա՜ն. մենք հեռուէն այս կենդանիներուն կռիւը դիտելով կ'սպասենք մէկ կողմին վերջնական յաղթութեանը:

Գնոց հետեւեալ ցուցակը բաւական գաղափար կրնայ տալ բամբակի հրապարակին արդի կացութեան վրայ:

	Բացուեցաւ	Փակուեցաւ
Հոկտեմբերի մէջ յանձնելի-(ակրան)՝	4 բէնս 29 միութիւն *)	4 բէնս 25 միութիւն
Նոյեմբերի »	4 » 28 »	4 » 25 »
Դեկտեմբերի »	4 » 29 »	4 » 29 »
1893 Յունուարի »	4 » 31 »	4 » 27 »
» Փետրուարի »	4 » 33 »	4 » 30 »
» Մարտի »	4 » 35 »	4 » 32 »
» Ապրիլի »	4 » 39 »	4 » 34 »
» Մայիսի »	4 » 41 »	4 » 37 »
» Յունիսի »	4 » 44 »	4 » 39 »

(*) Մէ՛կ «միութիւն» կամ մէ՛կ «բուէնթօ» (point) 1/64 բէնսի հաւասար է:

Նիւ-Եօրքի մէջ եւս գները 1/16 վրայ դըրին. ապագային յանձնուելու պայմանաւ թուականէս շաբաթ մ'առաջ ի Նիւ-Եօրք մէկ օրուան մէջ ծախուեցաւ 277,000 հակ մինչեւ հոկտեմբեր 7 (Ն. Ե.) Ամերիկայի զանազան նաւահանգիստները մէկ շաբթուան մէջ հասած բամբակն է 187,000 հակ, մինչ անցեալ տարին նոյն շաբթուն յանձնուած էր 295,900 հակ: Ամերիկայի պահեստը սկսած է զգալապէս նուազիլ. անցեալ տարի սեպտ. 30ին (Ն. Ե.) Ամերիկայի պահեստը պաշտօնապէս կը հաշուուէր 716,000 հակ, մինչ այս տարի նոյն թուականին միայն 596,000 հակ կը հաշուուի:

Որքան որ ալ այս թուանշանները գնոց յաւելման հաւանականութիւնները սկսած են շատցնել՝ միւս կողմանէ, քանի որ հունձքը տակաւին բոլորովին աւարտած չէ՝ անխոհեմութիւն պիտի ըլլար «արջ»երուն կարծիքը վճռօրաբար արհամարհել:

* *

Ի մօտոյ հրատարակութեան պիտի յանձնենք Անգլիոյ ներածմանց և արտածմանց վերջին ինննամսեայ չափագրի մէկ տեղեկագիրն:

ՊՐՕՔԸՐ

6/18 հոկտեմբեր 92

Գաւառական լուրեր

ԵԴԵՍԻԱ, 23 սեպտ.

Վեց տարիէ ի վեր 3000 լիրայէն աւելի ծախիւք շինութիւնը շարունակուած Ջրուղեաց ապարատումը ծանուցանելով «Արեւելք»ի օգոս. 15 ի թուով հրատարակեալ նամակաւ մը, խոստացած էինք յառաջիկայ կիրակի օրը (26 յուլիս) կատարուելիք գոհաբանական աղօթից և կրօնական արարողութեանց նկարագրութիւնը հաղորդել առաջին առթիւ:

Թէեւ առանց մեր խոստումը մոռցած ըլլալու առաջին սուրհանդակաւ յուլիս 29ին գրած էինք այն հաղուադէպ և փառաշուք հանդիսին մանրամասն նկարագրութիւնը, սակայն նկատելով որ—թերեւս խմբագրատուն ժամանած չըլլալուն(*)—այն չերեւցաւ ցարդ, ուստի մեր տեղական ժամանակագրութեան համար իւր կարեւորութիւնն ունեցող նոյնպէս հանդիսական դէպքը չուզելով անյիշատակ թողուլ քանի որ մեր տկար ձեռնհասութեան չափով կ'աշխատինք գաւառիս դէպքերը ըստ կարելւոյն անվրէպ օրագրելու, այդ մասին գէթ այս անգամ, հակիրճ քանիք սա չափը կը յիշենք ուրեմն թէ նոյն օրը՝ հանդիսին ներկայ էր գրեթէ աննկարագրելի բազմութիւն ազգային և օտարաց: Առաւօտուն՝ հանդիսաւոր Պատարագ. յետոյ, նորակերտ աւազանին շուրջը հանդիսաւոր բարեմաղթութիւնք՝ վասն Թանկագին կենաց Օգոստ. Վեհապետին մերոյ Սուլթան Համիտ Բ. ի որ բարեհաճած էր հրամայել որ Ջրուղեաց կամուրջն Օսմանիյէ անուանի և կայսերական Թուղրայով զարդարուի: Բարեմաղթութեանց տուները կը յանգաւորեն ժողովրդեան հնչուն «ամէն»ները: Ապա գոհաբանական աղօթք և «հոգեհանգստեան պաշտօն» վասն ի Տէր հանգուցեալ և կենդանի նուիրատուաց:

Այն պահուն՝ Առաջնորդ Տ. Խորէն սրբազանի, որ զգեստաւորեալ և կայսերական պատուանշան ի կուրծս աւազանին վերեւ հանդիսադիր եկեղեցականաց դասուն կը նախագահէր և ի յանգ եղած նոյն կարեւոր ձեռնարկութեան առթիւ ակներեւ սրտայոյզ ուրախութեան արցունք կը հեղոյր, խաչակարկառ ձեռնարկութեանը վրայ, շատրուաններու խիցերը կը քաշուին և ջուրը՝ նոյն վայրկենին՝ արծաթափայլ փրփուրներով կը սկսի աւազանը ողողել: Եկեղեցականք անմիջապէս կ'երգեն խորհրդաբար. «Որ ի վերայ ջուրցն գոլով.» եւ «Օրհնեսցի և պահպանեսցի և նախախնամեալ պահեսցի ջուրս այս նշանաւ և այլն.» Եւ ժողովուրդն աւելի եռանդեամբ դէպի աւազանը կը մղուի և ուրախութեան աղաղակներ կ'արձակէ: Այս միջոցին թափօրը դպրաց երգերով կ'ընթանայ Առաջնորդարանի սրահը: Անդ, դարձեալ Օգոստ. Սուլթանին անուան ձօնեալ երգեր կը լսուին և 2 հայերէն ու 1 թուրքերէն բանախօսութիւնք կ'արտասանուին ընդմիջմամբ «ամէն»ներու, «կեցցէ»ներու և ծափահարութեանց:

Սրբազան Առաջնորդը խօսք կ'առնու յուզեալ շեշտերով, նախ քան զամենայն Օգոստ. Սուլթանի անմոռաց շնորհներն յիշելով՝ ջերմագին բարեմաղթութիւններ կ'ընէ Նորին Վեհափառութեան Թանկագին կենաց համար: Ներկայք սուրճով եւ օշարակով կը պատուասիրուին և կը մեկնին անմոռանալի տպաւորութիւն մը տանելով օրուան եղական հանդէսէն:

—Ի Գոհութիւն տեղւոյս հասարակութեան, քաղաքիս մէջ, ըստ առաջնոյն Առեւտրական ուրոյն դատարան մ'ունենալու մասին, անցեալները կայս. կառավարութեան ըրած բարեհաճ տնօրինութիւնն գործադրեցաւ այս անգամ նոյն Դատարանի վերակազմութեամբն՝ հետեւեալ կերպիւ.

Մէնձէտ Րաթիպ էֆ. Նախագահ
Անդամք
Հաճի Պէքիր էֆ.
Ալի Հաֆըզ »
Մէնձէտ Քեամիլ »
Սարգիս » Քեաղդալեան
Եղիաս » Տապաղեան
Միքայէլ » Ապպաճի

—Առաջ. Փոխանորդ Տ. Յովհաննէս քահանայ Փազանճեան վերադարձաւ Սևերէկէ, ուր սրբազան Առաջնորդի հրահանգաւ ուղեւորած էր քննչի պաշտօնով:

Գոհութեամբ կ'իմանանք թէ Փոխանորդ հօր պաշտօնն՝ ի դերեւ չելնելով յաջողած է հաշտեցնել և միացնել Սևերէկի ազգայնոց մէջ երեւան ելած երկու կուսակցութիւնները:

—Համիտիյէ Հեծելագունդերու թիւն 100ի բարձրացնելու համար կայս. հրամանաւ Դ. զօրաբանակի բարձրաստիճան սպայներէ կազմեալ Յանձնաժողովն, որոյ գլուխը կը գտնուի Վսեմ. Հագգը փաշա, ամսոյս 19ին քաղաքս ժամանեց, ուր կ'զբաղի այժմ իւր պաշտօնին վերաբերեալ գործերով:

Արդէն պաշտօնատարք ղրկուած են գաւառիս գիւղախմբերէ ի Խառան Տիւէկլի—Ճուլապ, Պէզիքի և ի Պօզ—Ապատ, հեծելագնդոց կազմութեան նախապատրաստութեամբք զբաղելու:

—Տեղւոյս Սրբազան Առաջնորդն եւս շնորհաւորութիւններ ուղղեց Նորընտիր Վեհափառ Հայրապետին Ամենայն Հայոց ի Ս. Երուսաղէմ:

Գ. Կ. Ո.

(*) Ն. Խ.—Արդարեւ մեր թղթակցին յիշած նամակը չէ հասած ձեռքերնիս:

ԲԺՇԿՈՒԹԻՒՆՆ

ԸՍՏ ՎՈԼԴԷՐԻ

Հռչակաւոր իմաստասէրը, իւր Փիլիսոփայական Բառարանին «Բժշկութիւն» յօդուածին մէջ հետեւեալ կերպով կը պատէ Հիպոկրատեան արուեստը.

Կ'ենթադրեմ որ, չքնաղագեղ հարուստ տիկին մը՝ որ երբեք բան լսած չէ անդամազննութեան վրայ, հիւանդացած ըլլայ շատ ուտելուն, շատ պարելուն, շատ տքընելուն, շատ ընելուն համար այն ամեն բաները՝ զորս բազումք երեւելի տիկնանց կ'ընեն. կ'ենթադրեմ որ, իւր բժիշկը ըսէ անոր. «Տիկին, որպէս զի առողջանաք, պէ՛տք է որ ձեր ուղեղն և ուղեղիկն լաւ համեմատեալ ողնածուծ մը բաշխէ (1) ձեր մէջքի ոսկրին մէջ մինչեւ ձեր ողնածայրը և այդ ողնածուծ երթայ ոգեւորել հաւասարապէս տասնեւհինգ զոյգ ջիղ աջէն և տասնեւհինգ զոյգ՝ ձախէն: Պէտք է որ ձեր սիրտ կծկի և բացուի մի՛շտ հաւասար զօրութեամբ մը, և թէ ձեր բոլոր արիւն՝ զոր սիրտը կը յղէ ջրհորի մը պէս ձեր երակաց մէջ, շրջի ձեր բոլոր երակաց մէջ՝ օրական գրեթէ վեց հարիւր անգամի չափ:

«Այս արիւն շրջելով ա՛յնքան արագութեամբ՝ զոր չունի բնաւ Ռոն գետը, անցած տեղերը պէտք է թողու այն ամեն նիւթ որ հարկաւոր է ձեր աւիշին, մէզին, մազին և այլոց համար, ինչ որ պիտանի է ձեր արտաղրութեանց համար, նաեւ ոռոգելու համար ձեր սպիտակ, թարմ եւ քնքուշ մորթը՝ որ առանց անոր պիտի ըլլար գորշագոյն մօտ դեղին, չոր և խորշոմած, հին մագաղաթի մը պէս:

Տիկինը.—Լաւ ուրեմն, պարոն, ամուսինս ձեզ կը վճարէ այս ամենը ինձ ընելու համար. մի՛ թերանաք ամեն բան իւր տեղը դնելու եւ շրջել տալու իմ հեղուկներս ա՛յնպէս՝ որ ես գոհ ըլլամ: Ձեզ կ'ազդարարեմ որ ես երբեք հիւանդ ըլլալ չեմ ուզեր:

Բժիշկը.—Տիկին, ձեր բաղձանքները ուղղեցէք առ Հեղինակն բնութեան: Միակ զօրութիւնն՝ որ տայ ընթանայ միլիառով մոլորակներ և գիսաւորներ միլիոնաւոր աբեգականց շուրջը, կարգադրած է ձեր արեան շրջանը:

Տիկինը.—Ի՞նչ, դուք բժիշկ էք. և չէ՞ք կրնար ինծ բան մը տալ:

Բժիշկը.—Ո՛չ, տիկին, մենք ո՛չ թէ բան մը տալու, այլ բան մը քաղելու սահմանեալ ենք: Բան մը չաւելցուիր բընութեան: Եթէ ձեր Ազնուութիւնը անյագաբար ճաշած է, կրնամ ձեր աղիքները մաքրել կասիայով, մանանայով և աճալով: Եթէ քաղցկեղ մը ունիք, կրնամ կտրել ձեր ծիծը՝ եթէ հոն է ախտը, սակայն նոր ծիծ մը չեմ կրնար տալ: Եթէ քար ունիք ձեր փամփուշտին մէջ, կրնամ ձեզ ազատել ընդլայնիչ գործիքով մը եւ այերէն նուազ ցաւ պատճառելով ձեզ: Եթէ ոտքերնուդ մէկը գանկրէն եղած է, կը կտրեմ, եւ դուք միւս ոտքերնուդ վրայ կը քալէք: Միով բանիւ, մենք բժիշկներս, կատարելապէս կը նմանինք ակռայ քաշողներու. ասոնք կրնան ձեզ ազատել ձեր մէկ փտած ակռայէն, առանց ձեզ տալու ուրիշ մը որ բունէ մնայ, ո՛րչափ ալ չագակրատ ըլլան:

Տիկինը.—Դուք զիս կը դողացնէք: Ես կը կարծէի որ բժիշկները ամեն ցաւ կը բուժեն:

Բժիշկը.—Մենք անվրէպ կը բուժենք զամեն անոնք որոնք կը բուժին իրենք իրենցմէ: Ընդհանրապէս և քիչ բացառութեամբ այսպէս է ներքին և վերաբուժական հիւանդութեանց մասին: Բնութիւնը միայն գլուխ կ'ելլայ այն հիւանդութեանց հետ որոնք մահացու չեն. իսկ անոնք որ մահացու են, մեր արուեստին մէջ ո՛ր և է միջոց մը չպիտի գտնեն աղէկի դառնալու:

Տիկինը.—Ի՞նչ, բոլոր այն գաղտնիքը՝ արիւն մաքրելու համար՝ զորմէ խօսեցան իմ բարեկամուհիներս, վարպետ Լը Լիէվրի կենաց բալասանը, վարպետ Առնուլի Դեղային քսակները, բոլոր այն գովասանեալ դեղահատները...

Բժիշկը.—Ասոնք բոլորն ալ ստակ վաստկելու համար են և մինչ անդին բնութիւնը մինաւորիկ կը գործէ, ազդիս հիւանդները զուարճելու համար հնարուած բաներ:

Տիկինը.—Սակայն մասնաւորապէս ազդող դեղեր կան:

Բժիշկը.—Այո՛, տիկին, վիպասանութեանց մէջ ժուվանիի ջուր կոչուած կենսանորոգ հեղուկին նման:

Տիկինը.—Ուրեմն ինչի՞ վրայ կը կայանայ բժշկութիւնը:

Բժիշկը.—Ձեզ արդէն ըսի, մաքրելու, սրբելու այն տունը զոր չկրնար վերակառուցանել:

Տիկինը.—Սակայն կան բաներ որոնք առողջութիւն կուտան, այլք որ վնասակար կը հանդիսանան:

Բժիշկը.—Գուշակեցիք բոլոր գաղտնիքը: Կերէք, և չափաւորապէս, ինչ որ փորձով գիտէք թէ ձեզ կը յարմարի: Մարմնոյ համար օգտակար է միայն այն որ կը մարսուի: Ո՞ր դեղ ձեզ մարսել պիտի տայ: Մարմնամարզը: Ո՞րը ձեր ոյժերը պիտի վերահաստատէ: Քունը: Ո՞րը պիտի նուազեցնէ անբուժելի ցաւերը: Համբերութիւնը: Ո՞րը կրնայ փոխել գէշ կազմ մը: Ոչինչ: Բոլոր սաստիկ հիւանդութեանց մէջ Մոլիէռի դեղագիրը միայն ունինք, արիւն առնել, լուծել և եթէ կամին, գրեխել. Չորրորդ մը չկայ: Այս ամենը ուրիշ բան չէ, ինչպէս ըսի ձեզ, բայց եթէ մաքրել տուն մը որուն չենք կրնար սեպ մը աւելցնել: Բոլոր արուեստը կը կայանայ ըստ պատշաճի վարուելու վրայ:

Տիկինը.—Դուք ձեր ապրանքը չէք պարծեր: Դուք պատուաւոր մարդ էք: Եթէ բարձր աստիճանի մը հասնիմ ձեզ իմ առաջին բժիշկս կ'ընեմ:

Վոլթէռի այս նկարագրութիւնը ո՛րչափ ուղիղ, ա՛յնչափ ալ սխալ է: Եթէ զայն պարապոյ ժամու մը մէջ թարգմանելով ի հրապարակ հանեցինք, սա՛ գլխաւոր պատճառաւ է որ, բժշկութեան օտար անձինք ո՛րչափ ալ մեծ փիլիսոփայ ըլլան, այսօր իսկ անոր պէս կը խորհին մեր արուեստին վրայ: Եթէ Փիլիսոփայական Բառարանին հեղինակն իսկ անդամազննական և բնախօսական գիտութեանց հիմնական սկզբանց անգէտ գտնուելով, բժշկութիւնը չարաչար խըծբըծելու ենէ, զարմանալու չէ որ կարգ մը իմաստակներ, կատարելապէս զուրկ հիպոկրատեան աքանչելի արուեստին գիտութենէն, ինչե՛ր չեն խօսիր կամ գրեր զայն պարսաւելու համար:

Այսօր վիրաբուժութիւնը, մանկաբարձութիւնը և անոր վերաբերեալ մասերը մաթեմաթիկական ճշդութեան մօտենալու չափ զարգացած են: Բժշկութիւնը—այն որ ի վաղուց ցայսօր կը քննադատուի, Ներքին ախտերու գիտութիւնը—շատ մը հիւանդութեանց համար կարեւոր յառաջդիմութիւններ ըրած է. Վոլդէռի նկարագրած տիկնոջ պահանջածը անկարելին է: Մարդս երբեք չպիտի կարողանայ ընել այն զոր արարչագործութեան մեծ Հեղինակը միայն կրնայ ընել: Եթէ կայ բժշկութեան մէջ քննադատելի կէտ մը, այն ալ՝ զայն գործադրողաց միայն կը պատկանի: Շատեր բժիշկ կ'անուանին, սակայն քիչեր բժիշկ կը լինին: Ժողովուրդը, ո՛ւր որ ալ ըլլայ, անկարող է աղէկը գէշէն որոշելու: Սակայն պարագաներն են որ բժշկի մը համբաւ ըստանալուն կը նպաստեն: Բժիշկ մը որ խղճի մտօք ուսած է իւր արուեստը, և խղճի մտօք կը գործադրէ զայն, մարդկութեան տունը չինող ճարտարապետաց կարեւորագոյնն է: Միայն անոնք՝ որ մարդկային ամեն միջքեր գործելով հանդերձ՝ Մաթուսաղական կենօք ապրիլ կը յաւակնին, միշտ յոռետեսութեամբ պիտի դատին յաւէտ այդ պատուական արուեստը:

ՏՈՔԹ. Ռ. ՌՈՊԷՆՍՈՆ

---

(1) Մեծանուն փիլիսոփային այս և յետագայ տողերուն մէջ անդամազննութեան և բնախօսութեան խոշոր սխալներ գործած է, ինչպէս պիտի տեսնեն անոնք որ տեղեակ են այս երկու կարեւոր գիտութեանց:

Ծ. Ց.

Աստի անտի

ԿԱՆԽԱՀԱՍ ԱՒԱԶԱԿՆԵՐ

Դպրոցականի տարիք ունեցող վեց ըստամբակներէ բաղկացեալ աւազակաց խումբ մը կազմուած էր վերջերս Ռօսէլ քաղաքին մէջ, Քէօնիկսպէրկի մօտ (Գերմանիա): Այս նորատի սրիկայներն երդուած էին հրճեգութիւն և աւարառութիւն ընել, և ամսոյս սկիզբն այս խորհուրդ ի գործ պիտի դրուէր: Ախոռ մը ճարակ եղաւ բոցերուն. դեղարան մը որ նոր կրակ կառնէր և Մուլէն փողոցին տուն մը ժամանակին ազատուեցան: Խումբին գլխաւորը, տարհամակն իւր ընկերներուն կուրծքին կրծնցուցնելով՝ երդում ընել տուած էր որ ընկերակցութեան գաղտնիքը դուրս չհանուի: Դեռատի չարագործներէն հինգն արդէն ձերբակալուած են. ասոնցմէ մին տասնեւհինգ օրէ ի վեր հեռացած էր հայրենի տունէն և արդէն գողութեամբ մը յանցաւոր եղած էր:

ԵՐԻՑՍ Ի ՄԱՀ ԴԱՏԱՊԱՐՏԵԱԼ

Եղեռնագործ մը որ իր բոլոր կեանքը գրեթէ անցուցած է բանտի մը երկու պատերուն միջեւ, Հանս Նիէլսըն, երրորդ անգամն ըլլալով Քօբէնհակի բարձրագոյն դատարանին կողմէ մահուան դատապարտուեցաւ: Առաջին երկու անգամներուն ներում շնորհուած էր:

Այս անգամ դատապարտուեցաւ իր պահապաններն սպանած ըլլալուն: Մարդասպանութենէն զատ, այս թշուառականը հրդեհ կը սիրէ: Ութ տարեկան էր երբ իր անձեւի ասպարէզին մէջ նետուեցաւ, ագարակ մը հրդեհի տալով: Հանս Նիէլսըն, ինչպէս ըսինք, տեսակ մը փառասիրութիւն ունի իբր ոճրագործ. բանտէն դուրս անցուցած կեանքին վրայ արդէն ահագին բեռ մը ունի: 1877ին, ի Լոնտոն կրակ տուած էր մեծ «Հնդկամթերանոցներուն»: Այս հրդեհ մեծ վնասներ պատճառեց որք քանի մը միլիոն ֆրանքի կը հասնին:

ԵՐԿԱՐԱԿԵՑՈՒԹԻՒՆՆ ԸՍՏ ՆԱԽՆԵԱՑ

Միջին դարու մէջ արարչագործութեան զանազան արարածոց երկարակեցութեան վրայ զանազան հաշիւներ կ'ընեն եղեր, որք իրականութեան եթէ ոչ բոլորովին՝ գէթ կիսովին կը մօտենային:

Էբինալի քաղաքային Մատենադարանին մէջ ԺԴ. դարէն մնացած ձեռագիր մը պահուած է որ հետեւեալ կերպիւ ներկայացուցած է երկայնակեցութեան հաշիւը և առանց անոր սխալներն իսկ փոփոխելու, որովհետեւ վերջին երկու տողերուն մէջ հաշուական սխալներ կան, հոս ի մէջ կը բերենք զայն.

Շուն մը կ'ապրի ինը տարի.
Ձի մը կ'ապրի երեք շունի չափ, քսանեւեօթը տարի.
Մարդ մը կ'ապրի երեք ձիու չափ, ութսունեւ մէկ տարի.
Ագռաւ մը կ'ապրի երեք մարդու չափ, երկու հարիւր քառասուն երեք տարի.
Եղջերու մը կ'ապրի երեք ագռաւի չափ, չորս հարիւր քսանեւինը տարի.
Կաղնի մը կ'ապրի երեք եղջերուի չափ, հազար երկու հարիւր ութսունեւեօթը տարի:

Յայտնի է թէ այս վերջին երկու տողերուն մէջ յիշուած գումարները պիտի ըլլան 729 և 2187:

Այս ձեռագրին տակ ԺԷ. դարուն գըրուած ծանօթութիւն մը կը յայտնէ թէ Եգիպտոսի մէջ ալ կային այդպիսի հաշիւներ, որք յիշուած են Պլինիոսի և Պլուտարքոսի գրեանց մէջ:

ԿԵՂԾ ԴՐԱՄՆԵՐՈՒ ԶԱՆԱԶԱՆՈՒԹԻՒՆԸ

Պղինձը, կապարն, անագն, են՝ լաւ հաղորդիչներ են ելեքտրականութեան համար, սակայն արծաթն այդ յատկութիւնը լիապէս կը բովանդակէ, միւսներէն շատ աւելի լաւ հաղորդիչ մ'է: Արդ, Պ. Էլիհու Թօմսըն, անգլիացի ծանօթ ելեքտրագէտը կ'առաջարկէ արծաթին այդ յատկութիւնը գործածել կեղծ դրամներն որոշելու համար, որք բնականաբար աւելի յոռի հաղորդիչ մը պիտի ըլլան ելեքտրականութեան համար:

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Բարեսիրտ մէկը.—Խե՛ղճ մարդ, ի՞նչ գէշ հազ մը ունիս:

Մուրացկանը.—Օհ, այո, պարոն, շատ գէշ:

—Հետս եկուր և նայիմ կրնա՞մ ճար մը գտնել...

—Ոչ, ո՛չ. շնորհակալ եմ, այս հազը ապրուստիս միակ միջոցն է:

* *

—Պ. Թ... որ հիմայ երկու միլիոն ոսկւոյ տէր է, գրպանին մէջ ստակ մը չունէր երբոր կենաց ասպարէզը մտաւ:

—Այդ բան մը չէ: Ես մինչեւ իսկ գըրպան չունէի երբոր կեանքս սկսայ:

* *

Պ. Մ... (կը կարդայ).—Գիտնական մարդիկ այն համոզումը գոյացուցած են թէ ապագայ մարդը ոչ մազ պիտի ունենայ և ոչ ակռայ:

Փոքր տղան (ընդմիջելով).—Հայրիկ, մեծ հայրս ապագայ մա՞րդ մ'է:

ԼԱՆՕԼԻՆ
ՔՐԷՄ ՏԸ ԹՈՒԱԼԷԹ
ԼԱՆՕԼԻՆ
ԼԱՒԱԳՈՅՆ դարման ընդդէմ այրուածոց կեղերուածներու:
ԳԵՐԱԶԱՆՑ մորթի պահպանման համար, մանաւանդ մանուկներու մասին, և գոյնի պահպանման:
ԼԱՒԱԳՈՅՆ դարման ընդդէմ մորթի հիւանդութեանց և ընդդէմ արիւնքթութեանց:
Կը վաճառուի ամեն դեղարաններու եւ դեղօրէից ու անուշահոտութեանց մթերանոցներու մէջ:
Գործակալ եւ ներկայացուցիչ ի Կ. Պոլիս
Մ. Ա. ՖՐԷՕՅԼԻԽ
Կալաթա, Մերթէկեանի փողոց, Դընտաճեան խան:

ՆՈՐ ԳՐԵԱՆՔ

ՏԵՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Այն ամեն հեղինակներն ու թարգմանիչներն, որք իրենց երկասիրութիւններէն երկերկու օրինակ յանձնեն Լրագրոյս խմբագրութեան, երեք անգամ անոնց ծանուցումն հրատարակուած պիտի տեսնեն Գ. էջին մէջ հինգ տողով: Երեք անգամէն աւելի հրատարակելի կամ ընդարձակ ծանուցմանց համար մասնաւոր պայմաններ կան:

Հովուական Աստուածաբանութիւն, Մելքիսեդեկ Եպիսկոպոսի Մուրատեանց, տպագրութիւն Ն. Պէրպէրեան. վաճառման կեդրոնատեղին է Զարդարեան գրատուն, Կ. Պոլիս, Սուլթան Համամ, գին 10 դրշ: 289 1—3

Գաղտնիք եւ Արուեստ Մոգութեան. հեղինակը Յովհաննէս Դասարճեան եւ Յովհաննէս Գազանճեան: Վաճառման կեդրոնատեղին է Պահճէ-գաբու Աղամալեան Յակոբ աղայի գրատունը: 288 1—3

Հրատարակուեցան Դիւտական Զբօսանքի Ա. եւ Բ. տետրերն, որք կը պարունակեն 42 հրահանգ եւ 37 գեղեցիկ պատկերներ: Մէն մի տետրակի գինն է 50 փարայ: 274 3—3

Նոր բառագիրք հայերէն լեզուի, Սիմոն Գաբամաճեանէ, էջ 672, գին 15 դահեկան ընտիր լաթակազմ: Վաճառման կեդրոնատեղին, Կ. Պոլիս, Հաճօբուլօ խան, Թիւ 29: 278 3—3

Հաւաքածոյ ընտիր գրուածոց ազգային եւ օտար մատենագրաց, արձակ եւ ոտանաւոր, Բ. մաս, Սիմոն Գաբամաճեանէ, գին 7 1/2 դահեկան: Կեդրոնատեղի, Կ. Պոլիս, Հաճօբուլօ խան, Թիւ 29: 279 3—3

Ոճք, յատկաբանութիւնք, առակք եւ մտնաւոր [illegible] ֆրանսերէն լեզուի. Հինդլեան, 1—12 կազմեալ գին 10 դրշ. Կեդրոնատեղին Պալենց գրատուն: 3—3

ՆԻՔՕԼԱ ԱՆՏՐԻՕՄԷՆՕ
ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ
Պոլիս Սուլթան Պայազիտ Քէտէճիլէր Պօշ Թիւ 99

Պ. Նիքօլա Անտրիօմէնօ այս անգամ Եւրոպայէ բերել տուած է լուսանկարչութեան յատուկ բազմաթիւ նորահնար գործիներ թէ՛ մեծ և թէ՛ փոքր լուսանկարներու պատրաստութեան համար: Պ. Նիքօլա Անտրիօմէնօ ինքն անձամբ կը հանէ իրեն դիմող բազմաթիւ յաճախորդաց լուսանկարները: Իբրեւ ապացոյց իւր կատարեալ յաջողութեան և յաճախորդացը հարկ եղած ապահովութիւնը տալու համար կը ծանուցանէ որ եթէ լուսանկար մը առաջին անգամ չյաջողելով տիրոջը կողմէ մերժուի, պատրաստ է երկրորդ անգամ հանել զայն: Ո՛վ որ կը փափաքի թէ՛ աժան գնով, թէ՛ շուտ և թէ՛ բնականին նման լուսանկար մը ունենալ կրնայ առիթէն օգուտ քաղելով դիմել Պ. Նիքօլա Անտրիօմէնօի լուսանկարչատունն, ուր ամեն կերպիւ գոհ պիտի մնայ:

Ինչպէս որ յստակ և պայծառ օրերու մէջ, նոյնպէս ամպոտ և մառախլապատ օրերու մէջ եւս լուսանկարք ամենայն յաջողակութեամբ պիտի հանուին նոր գիւտերու շնորհիւ:

Զգուշացէ՛ք կարգ մը անձերէ, որք ինքզինքնին իբրեւ լուսանկարիչ կը ներկայացնեն: 74—90

CRÈME SIMON
A LA GLYCÉRINE
PARIS SIMON LYON

ՔՐԷՄ ՍԻՄՕՆ
ՍԻՄՕՆԻ ՓՈՇԻ
ՔՐԷՄ ՍԻՄՕՆԻ ՕՃԱՌ
Յանձնարարուած Բարիզի, Վիէննայի, Լոնտոնի, Պերլինի, Նիւ-Եօրքի բժիշկներէն:
Ամենէն փայլուն վկայ կանանց կողմէ ընդունուած այս նիւթեր, նրբութեամբ և ընտիր անուշահոտութեամբ պատրաստուած, կը ճերմակցնեն դէմքի և ձեռաց վերնամաշկը, եւ անըմդդատելի կակուղութիւն մը կուտան մորթին և կ'անհետացնեն մորթին վրայ՝ ցուրտէն արեւէն եւ ծովու օդէն առաջ եկած գոյները:
ՍԻՄՕՆ, Բրօվանս փողոց, 36, ՓԱՐԻԶ
Դեղարանք, հոտաւէտավաճառք, վաճառանոցք ևն:

ՍԳՈԴԻ ՄՕՌՈՒԻ ՁԿԱՆ ՕՇԱՐԱԿ
Կ. Պոլիս, 15 սեպտ. 1889
Պարոնայք Սգոդ և Պօուն,
Յորմէ հետէ սկսած եմ գործածել ձեր Սգոդի Օշարակը, միշտ լաւ արդիւնքներ ունեցայ մանկանց խուլային և անարիւնութեան հիւանդութեանց քանի մը դէպքերու մէջ.
Իմ կարծիքս է թէ այս համեղ և յաջող պատրաստութիւնը միշտ նախամեծար համարուելու է Մօռուի ձկան իւղէն և կը յանձնարարեմ զայն.
ՏՐ. Ա. ԱՆՏՐԷԱՏԷՍ
Նախկին բժիշկ Օսմանեան բանակի

ԻԼԱՆ ՊԱՊԸ ՍԷՐԱՍՔԷՐԻ
Տէօրտիւնճիւ օրտուի Հիւմայունիւ իչիւն չուրուքթը մուղաւրլըլըկսը լազը մաշալինէ մէկվիքի մէնաքասաեա գօնուլմուշ օլան 5000 արշընը ճէօխան չաւանըն պէհէր արշընը ճէօխանի էանի մէթրօսը 14 ղրուշ 30 փարաեա մահալլի թալիպի իւզէրինէ օլուպ թարիխը իլանտէն իթիպարէն 3 կիւն խիթամընտա գարարը վիրիլէճէյինտէն ֆիյաթըն թէնզիլ իլէ իթմամ թալիպ օլանլարըն մաքամը Սէրասքէրի լէվազըմաթը ուսումիյէ տայիրէսինէ կէլմէլէրի: Նօ. 7 1—3

PHŒNIX FIRE OFFICE

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՈՅԹ Անգղ. Ոսկի 1,000,000

"ՖԻՆԻՔՍ"

Հիմնեալ ի Լոնտոն յամին 1782

ՖԻՆԻՔՍ, հիմնեալ աւելի քան մի դար յառաջ, սոսկ հրդեհի ապահովագրութեան ընկերութիւն մ'է' որոյ բաժնետէրք Անգղիոյ ամենահարուստ և համրածանօթ դրամատէրեր են՝ ունենալով անսահման պատասխանատուութիւն։

ՖԻՆԻՔՍ ընկերութեան աշխարհահռչակ առատաձեռնութեան մի գլխաւոր ապացոյցն է 18,000,000 Անգղ. ոսկւոյ գումարն զոր ցարդ վճարած է հրդեհի վնասուց համար։ 34

ՖԻՆԻՔՍ ընկերութիւնն կ'ապահովագրէ ընդդէմ հրդեհի և կայծակի կալուածք, կարասիք և ապրանք՝ յոյժ նպաստաւոր պայմանօք և միջնորդութեամբ առաջարկելոցս, որք ունիմք լիազօր իշխանութիւն կարգադրելու անմիջապէս մեր ապահովագրելոց կրած վնասներն։

Հ. ՍՈՒՐԱՆ և ԸՆԿ. ընդհ. գործակալք Կ. Պոլսոյ, Պուլկարիոյ և Սեւ ծովու եզերաց Թիւ 11 և 12, Սանտալճը խան, Ղալաթիա, Աւստրիական Թղթատան վերեւ։

HAMBURG MUNICH UNITED

ՀԱՄՊՈՒՐԿ եւ ՄԻՒՆԻԽ

ՄԻԱՑԵԱԼ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

Դրամագլուխ	Ֆռանք	8,000,000
Պահեստի դրամ ցվերջ յունիս 1890	»	6,165,860
Տարեկան հասոյթ	»	14,135,925

Ընկերութիւնքս ՓՈԽԱԴԱՐՁ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ կ'ապահովագրեն մթերանոցներ և բնակութիւններ և սոցա մէջ գտնուած վաճառքներ և կարասիներ խիստ չափաւոր սակագնօք։

Լիազօր ներկայացուցիչ Կ. Պոլսոյ

ՖՌԱՆՔՖՕՌԹՈՒԱՋ

ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Դրամագլուխ Ֆռանք 6,250,000 Պահեստի դրամ Ֆռանք 1,270,300

Ընկերութիւնս կ'ապահովագրէ շոգենաւուց և առագաստանաւուց վրայ բեռցուած վաճառքներ, ինչպէս նաև Թղթատարական և փոխադրական ընկերութեանց յանձնուած Թանկագին նիւթեր և դրամ պարունակող ծրարներ խիստ նպաստաւոր պայմանօք և սակագնօք։ Այն նիւթերու վրայ մեծաքանակ գումարներ կարենալ ապահովագրելու համար Ընկերութիւնս միացած է եւրոպեան 13 լուրջ ապահովագրական հաստատութեանց հետ որոց դրամագլուխն ու պահեստի դրամն է Աւելի քան 100,000,000 Ֆռանք

Լիազօր ներկայացուցիչ համայն Թուրքիոյ

ԳԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ, Պոլիս, Պահչէ-Գաբու, Անանիատիս խան 12, 13, 14

ԻԼԱՆ ՊԱԳԸ ՍԷՐԱՄՊԷՐԻ

Շամը չէրիֆ իլէ հավալիսինտէ պուլունան ասաքիրը շահանէ իչուն 308 սէնէսի Թըշրինը սանիսի իպթիտասընտան իթիպարէն 1 սէնէլիք օլարագ մուգթազի օլուպ մահալլինտէ մէվճուտ մունագասատա պուլունան կազ եաղը իլէ համասըն պուրաճա իթասընա Թալիպ օլանլարըն 4 համֆթաեա գատար մագամը սէրասքէրի լէվազըմաթը ումումիյէ տայիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր։ Նօ. 5 2—3

Ուրֆատա պուլունան վէ պուլունաճագ ըլլաճագ օլան ասաքիրը շահանէ իչուն 308 սէնէսի Թըշրինը սանիսի իպթիտասընտան իթիպարէն 1 սէնէլիք օլարագ մուգթազի օլուպ մահալլինտէ մէվճուտ մունագասատէ պուլունան էրզագը մութէնէվվիա վէ սայիրէնինի պուրաճա իթասընա Թալիպ օլանլարըն մագամը Սէրասքէրի լէվազըմաթը ումումիյէ տայիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր։ Նօ. 6 2—3

Էյլիւլէ անպարը իչուն միւպայաա օլունաճագ 2500 ատէտ էէրլի իմալի եուն քիլիմին պէհէր ատէտի 19 1/2 ղրշ. ա օլարագ Թալիպի էօհտէսինտէ օլուպ Թըշրինը էվվէլին 12ինճի կիւնինէ գատար պէհէր կիւն մունագասասը իճրա օլունարագ մէզքիւր կիւնտէ գարարը գաթիսի վիրիլէճէկինտէն իթասընա վէ իրթէսի կիւնի 100տէ 5 Թէմինաթընէ Թալիպ օլանլարըն մագամը Սէրասքէրի լէվազըմաթը ումումիյէ տայիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր։ Նօ. 4 3—3

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՔ

[illegible], Կ. Պոլսոյ և Օտեսայի մէջ

ԹՈՄԱՍ ՈՒԻԼՍԸՆ ՈՐԴԻՔ եւ ԸՆԿ

Անուանք	Թօնոյ	Անուանք	Թօնոյ	Անուանք	Թօնոյ
Ալպանօ	2000	Ֆլամինկօ	1600	Բալէրմօ	3200
Անճէլօ	3000	Կալիլէօ	5500	Բանաէր	1700
Ապօլլօ	5500	Կիգանօ	2200	Բլաթօ	1500
Արկօ	2300	Կօզօ	1800	Բօլօ	1000
Արիօսթօ	3000	Կրօտօ	2200	Քուինթօ	2800
Պառանօ	3000	Հիրօ	2000	Րիալթօ	4400
Պօրօտինօ	2200	Հիտալկօ	3300	Րինալտօ	3200
Պրաւօ	2000	Հիմպեր	7000	Րօլլօ	3000
Քէֆալօ	8800	Հումպէր	1200	Րօմէօ	3500
Գէյրօ	2600	Այակօ	5000	Րօզարիօ	3500
Գալիբսօ	2500	Ճիւնօ	2300	Սալէռնօ	4000
Գամէօ	2100	Քէյօ	2000	Սանդիակօ	8200
Գաթօ	2000	Քօլպինօ	4200	Սաֆօ	2000
Գօմօ	2700	Քօնիօ	2200	Սիլվիօ	2000
Ջիքակօ	5000	Լէօ	2000	Սօրէնթօ	4300
Գլիօ	3500	Լէօնթօ	4500	Թ. Ուիլսըն	3000
Գօլօրատօ	3400	Լիվօրնօ	3000	Թաուրօ	1200
Տիգօ	2500	Մալմօ	1500	Թօլիտօ	2800
Տօմինօ	2500	Մարէնկօ	4300	Թօրբիտօ	900
Տուրօ	4800	Մարգէլլօ	6500	Ուրպինօ	5000
Տրագօ	2100	Միլօ	2000	Վօլթուրնօ	5000
Էգինամօ	2600	Մուրինօ	3100	Եէտօ	3600
Էլտօրատօ	3000	Նիլօ	2000	Զէպրա	1000
Էլէքթրօ	3200	Օրլանտօ	3000	Տիֆայնէնս	200
Էրաթօ	2600	Օթէլլօ	5000	Ճէլիզօ	200
Ֆալքօն	800	Օգրանօ	4500	Զէրօ	140
Ֆիտօ	700	Օգօ	2000	Մօզքիթօ	120
Էմիբայր Մօնարք	3000				
Բիբժիբն Մօնարք	8000				
Լըտիըն Մօնարք	8100				

«Իակօ» շոգենաւը, Նաւապետ Ուադըն, ընդհանուր վաճառքով Հըլէն ասա հասած է։

Ուղեւորներու համար ամէն դիւրութիւն կ'ընծայուի

Դիմել առ Ֆ. ՀԻԼՏ ԵՒ ՌԻՑՕ

Գործակալք

Թիւ 17-18, Քիւչիւք Միւմէթ

40 խան. Ղալաթիա

ՄՈՍ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Լիվերփուլ և Միջերկրականի մէջ բանող շոգենաւք

Անուանք	Թօնոյ	Անուանք	Թօնոյ
Քանտօքու	4200	Աֆրիքօ	3000
Ֆէնս	4000	Օռայրիս	3000
Օսմանլը	4000	Նէբթուն	3000
Սէսօսդրիս	3250	Բէրօ	3000
Թիպռ	3250	Լօթուս	800
Մալայա	3250	Օլիմբօս	800
Մարիօթիս	3250	Ռէտալ	700

Դիմել առ Ժ. Վ. ՎԻԹՕԼ և Ընկ.

Ուիթալ խան

ՃԷՅՄՍ ՄՈՍ և ԸՆԿ.

31, Ճէյմս Սթրիթ Լիվրբուլ

EMULSION SCOTT

(ՍԳՈԳԻ ՕՐՃԱՌԻԿ)

ԾՈՐԻՒ ՁԿԱՆ ՕՒՏ ԻՒՂ

Հիփօֆօսֆիթ կրի և սոտայի

Պատրաստեալ Պարոն ՍԳՈԹԻ և ՊՕՈՒՆԻ ի Նիւ-Եորք

Կաթին չափ ախորժահամ է

Մորիւ ձկան հում իւղի բոլոր յատկութիւններէն զատ, Հիփոֆոսֆիթներու յատկութիւններն ալ ունի

Կը բուժէ Թոքախտը

Կը բուժէ անարիւնութիւնը

Կը բուժէ խոյլերը

Կը բուժէ հազը, ցրտառութիւնները

Կը բուժէ ընդհանուր տկարութիւնը

Կը բուժէ մանկանց ճռզածութիւնը

Բժիշկներէն ընդունուած է, ախորժ համ ու հոտ ունի, դիւրամարս է, և ամենէն փափուկ ստամոքսները կը տանին զայն.

Կը վաճառուի գլխաւոր դեղավաճառաց և դեղագործաց քով.

Գործակատարք ի Կ. Պոլիս, ՀԱՆՄԸՐ ԵՒ ՀԻՐՇԼ

ՌՈՅԵԱԼ ԷՔՍՉԷՆՃ

ԱՍԻՒՌԱՆՍ ՔՈՐՓՕՐԷՇԸՆ

ԱՄԵՆԷ ՀԻՆ ԵՒ ԱՄԵՆԷ ՄԵԾ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԼՈՆՏՈՆ 1720ԻՆ

Դրամագլուխ աւելի քան	Անգլ. ոսկի	4,000,000
Ցարդ հրդեհի արկածից համար տուած է	»	35,000,000

Ընկերութիւնը կ'ապահովագրէ քարաշէն և փայտաշէն ամէն տեսակ կալուածներ, կահ կարասիք և ապրանք։

Վճարմունք ամենայն կանոնաւորութեամբ և մանաւանդ առանց որ և իցէ ՁԵՂՋԻ կը կատարուին։

Աւելի ընդարձակ տեղեկութիւն առնուլ փափաքողք կը հրաւիրուին դիմել առ Ընդհանուր գործակալս Ճ. Վ. ՈՒԻԹԱԼ ԵՒ ԸՆԿ.

140 Պահճէ Գաբու, Մէյտանճըք սօքաք, Ուիթալ խան.

ՀԻՒՍԱՐԱՆ

221 Մեծ-Փողոց, Բանկալթի

Բանկալթիի մեծ հիւսարանին մէջ կը պատրաստուին մետաքսեայ, Ֆիլոֆէօզէ, բուրդէ եւ Էսթրամատուրէ գուլպաներ եւ գանկապաններ, ձեռնոցներ, վզնոցներ, քաշ-քօրսաժներ, անկողնոյ ծածկոյթներ եւ հիւսուածագործութեան ուրիշ ամէն տեսակ նիւթեր։

Տնօրէնութիւնը շնորհակալ կ'ըլլայ բազմաթիւ յաճախորդաց, ինչպէս նաեւ այն ընտանեաց որք բարեհաճած են պատուել զինք իրենց յանձնարարութիւններով, եւ կը յուսայ թէ պիտի հաճին շարունակել յառաջիկային նախապատուութիւն տալու տեղական սոյն գործարանի նիւթերուն, որքանակի մասին նման են Եւրոպայէն սոյն օրինակ նիւթոց եւ աւելի աժան են անոնցմէ.

Գործարանը կը վաճառէ նաեւ ընտանեաց համար հիւսելու լաւ մեքենայներ եւ գործաւորուհեաց յատուկ այլ մեքենայներ որք կրնան օրը մինչեւ 24 զոյգ արտադրել, հիւսուածագործութեան դասեր ալ կը տրուին։ 253

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱՑ

ԳԻԾ Կ. ՊՈԼԻՍ—ԱԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ—ՊԵԼԼՈՎԱ

Արեւ. ճեպ. Թ. 2 Բշ. Եշ. Ա. ժ. վ.	Կուխ. ճամբ. Թ. 4 Ամ. օր ԱԲԳ ժ. վ.	Կուխ. խառն Թ. 62 Ամ. օր ԱԲԳ ժ. վ.	Կուխ. խառն Թ. 132 Բշ. Եշ. ԱԲԳ ժ. վ.	Կուխ. խառն Թ. 124 ԱԲԳ ժ. վ.	ԿԱՅԱՐԱՆՔ	Կուխ. խառն Թ. 123 ԱԲԳ ժ. վ.	Կուխ. խառն Թ. 131 ԱԲԳ ժ. վ.	Կուխ. խառն Թ. 61 Ամ. օր ԱԲԳ ժ. վ.	Կուխ. ճամբ. Թ. 7 Ամ. օր ԱԲԳ ժ. վ.	Արեւ. ճեպ. Թ. 1 Ա. ժ. վ.
7 20	8 15	6 30			Մկ. Կ. ՊՈԼԻՍ .... ժմ.			8 32	8 22	4 00
		6 41			Գում-գաբու			8 23		
		6 53			Եետի-գուլէ			8 07		
		7 12			Մագրիգիւղ			7 44		
		7 26			Այաթէֆանոս			7 22		
		7 45			Քիւչիւք-Չէքմէճէ			7 07		
		8 29			Սբարթա-գուլէ			6 22		
	9 33	9 05			Հատըմքէօյ			5 56	6 58	
		9 43			Չաթալճա			4 53	6 17	1 50
9 32	10 31	10 35			Գապաքճէ			4 20		
		11 27			Սինէքլի			3 29		
	12 12	12 09			ժմ. Չերքէսքէօյ մեկնում			2 37	4 38	12 09
	12 14	12 40			մկ. ժամանում			2 12	4 33	12 04
12 04	12 36	1 41			Չորլու			1 26	3 56	
		2 33			Մուրաթլը—Քէօբէքլի			12 26		
		3 05			Սէյտլէր—Չիֆթլիք			11 53		
	2 28	3 44			Լիւլէ—Պուրկազ			11 16	2 26	
2 05	2 35	4 30			Պապա—Էսքի			10 39	2 00	9 33
		5 13			Բապլա-քէօյ			9 40		
	3 38	6 08			Ուզուն—Քէօբրիւ			8 56	12 50	
	4 16	6 47			Գուլէլի—Պուրկազ			7 46	12 31	8 09
		7 12			Ուլիք			7 14		
4 24	5 09	7 39			ժմ. ԱԴՐ. ՊՈԼԻՍ .... մկ.			6 25	11 37	7 14
4 29	5 19		3 15		մկ. ժմ.		1 25		11 22	7 09
			4 07		Գառաքէօյ		12 32			
5 26	6 12		4 57		ժմ. Մուսթաֆա փաշա մկ.		11 39		10 27	6 12
5 31	6 32		5 17		մկ. ժմ.		11 19		10 02	6 07
6 14	7 13		6 38		ժմ. Հարմանլը մկ.		9 54		9 12	5 23
6 20	7 38		6 55		մկ. ժմ.		8 48		8 59	5 18
	8 01		7 38		ժմ. Թրնովա-Սէյմէնլի մկ.		8 01		8 35	4 53
	8 11			10 50	մկ. ժմ.	12 50			8 23	4 48
	8 47			11 50	Գայալըքլը—Հասքէօյ	12 06			7 32	
	9 34			1 07	Եէնի—Մահալլէ	10 50			7 05	
8 38	9 59			1 49	Բաղազըք	9 58			6 39	3 06
	10 25			2 24	Գաթանիցա—Պաշմագ	9 04			6 14	
9 23	10 44			2 49	ժմ. Փիլիպէ մկ.	8 25			5 54	2 17
9 33	11 04			3 20	մկ. ժմ.	7 51			5 34	2 12
	11 58			4 41	Թաթար Բազարճըք մկ.	6 45			4 43	
	12 22			5 12	ժմ. Սարամպէյ մկ.	6 00			4 17	
	12 28				մկ. ժմ.				4 16	
11 10	12 44				ժմ. Պելովա մկ.				4 01	12 44
3 20	4 29				Սոֆիա				12 34	15
2 10	9 30				Նիշ				5 51	9 20
8 48	4 48				Պելկրատ				10 55	57
9 40	1 20				Պուտաբէշթ				2 40	30
3 16	7 20				Վիէննա մկ.				8 30	2 30

ԳԻԾ ՍԷԼԱՆԻԿ—ՈՒՍՔԻՒԲ—ՄԻՋԻՑԷ

Կանոնաւ. խառն Թ. 512 ամէն օր ժ. վ.	Կանոնաւ. խառն Թ. 522 ամէն օր ժ. վ.	ԿԱՅԱՐԱՆՔ	Կանոնաւ. խառն Թ. 523 ամէն օր ժ. վ.	Կանոնաւ. խառն Թ. 5 ամէն օր ժ. վ.
5 10		Սելանիկ (Պիւֆէ) ..... ժմ.		10 15
5 44		Թօբսին ..... մկ.		9 44
6 21		Ամաթովօ		9 04
6 43		Քարասուլի		8 41
6 53		Կիւմէնճէ		8 31
7 31		Կէօրկէլի		7 59
8 05		Միրաւջէ		7 18
8 15		Ստրումիցա		7 06
8 47		Տէմիրգաբու (Պիւֆէ) ժմ.		6 32
8 57		մկ.		6 17
9 42		Քրիվօլաք		5 49
10 21		Վէլէս—Կէօբրիւլիւ		5 00
11 08		Քէօբրիւլիւ ժմ.		4 10
11 18		մկ.		4 00
12 06		Զէլէնիքօ		3 17
12 42		ՈՒՍՔԻՒԲ (Պիւֆէ) ժամ.		2 41
	1 06	մկ.		
	1 47	Ագճալար	2 20	
	2 42	Գումանօվա	1 44	
	3 15	Թապանօվչէ	1 07	
	3 43	Բռէզօվա	12 29	
	3 56	Պուգանովչէ	12 04	
	4 21	Պրէյէնէվչէ	11 46	
	4 34	Զիպեֆչէ	11 16	
			11 00	
	9 36	Նիշ	5 51	
	4 48	Պելկրատ	10 55	
	1 20	Պուտաբէշթ	2 40	
		Վիէննա մկ.	8 30	

ԳԻԾ ՈՒՍՔԻՒԲ—ՄԻԹՐՈՎԻՑԱ

Կանոն. խառն Թ. 622 Բշ. Դշ. ուրբ. ժ. վ.	ԿԱՅԱՐԱՆՔ	Կանոն. խառն Թ. 621 Եշ. Շբ. կիր. ժ. վ.
7 15	Ուսքիւբ (Պիւֆէ) ժամ.	12 29
8 22	Էլեշան ..... մկ.	11 36
9 17	Քաչանիք	10 59
10 27	Ֆէրիզովիչ	10 12
11 20	Լիբլեան	9 11
12 12	Բրիշթինա	8 16
12 58	Վուչիթրն	7 22
1 15	Միթրովիցա ..... մկ.	7 00

ԹՐՆՈՎԱ—ՍԷՅՄԷՆԼԻ—ԵԱՄՊՕԼԻ

Կուխ. խառն Թ. 321 Բշ. Եշ. ԱԲԳ	Կուխ. խառն Թ. 323 Կիր. ԱԲԳ	ԿԱՅԱՐԱՆՔ	Կուխ. խառն Թ. 322 Դշ. Շբ. ԱԲԳ	Կուխ. խառն Թ. 324 Կիր. ԱԲԳ
9 15	1 40	մկ. Թրնվ.-Սէյմէնլի ժմ.	7 20	9 48
9 58	2 25	Գարաբունար	6 46	9 15
11 05	3 32	Րոշէ—Մ...էսի	5 45	8 14
12 43	4 43	Եէնի—Զաղրա	4 42	7 09
1 11	5 41	Սիլէօ—Քըրմանլը	3 41	6 19
2 00	6 50	Եամպօլու ժմ.	2 40	5 19
6 58		ժմ. Պուրկազ մկ.	9 40	

ԱԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ—ՏԷՏԷ ԱՂԱՃ

Կուխ. խառն Թ. 221 Բշ. Դշ. և ուր. ԱԲԳ	ԿԱՅԱՐԱՆՔ	Կուխ. խառն Թ. 222 Գշ. Եշ. և շբ. ԱԲԳ
7 51	մկ. Ա. Պոլիս ..... ժմ.	6 53
8 47	Ուզուն	5 58
9 33	Գուլէլի — Պուրկազ	5 30
10 10	Տիմէթօքա	4 38
11 22	Սուֆլի	3 31
12 20	Ֆէրէճիկ	2 31
1 21	Ֆէրէ	1 29
2 22	ժմ. Տէտէ-Աղաճ ..... մկ.	12 30

ԴԻՏԵՂՈՒԹԻՒՆՔ

1. Ստորագծեալ վայրկեաններն կը ցուցնեն իրիկուան ժամը 6էն և առաւօտեան ժամը 5.59ը միջեւ եղած գիշերուան ժամերնակը.

2.—Կ. Պոլսոյ արուարձանաց ժամանակացոյցը մասնաւոր ցուցակ մը է եղած։

3.—Ձախակողմի սիւնակաց մէջ կառախմբոց մեկնման ժամանակը պէտք է կարդալ վերէն վար, և աջակողմի սիւնակաց մէջ վարէն վեր։

4.—Թիւ 321 «խառն կառախումբը» ի Թրնովա—Սեմենլի կը հաղորդակցի 7 Թիւ «պայմանագրական կառախմբին» հետ.

5.—Թիւ 322 «խառն կառախումբը» ի Թրնովա—Սեմենլի կը հաղորդակցի Թիւ 4 «պայմանագրական կառախմբին» և Թիւ 131 «խառն կառախմբին» հետ.

6.—Թիւ 621 խառն կառախումբը Ուսքիւբի մէջ կը հաղորդակցի՝ Զիպեֆչէ գացող Թիւ 522 եւ Սելանիկ գացող Թիւ 513 խառն կառախմբոց հետ.

7.—Մասնաւոր վակոն մը աւելցուած է Թիւ 7 և 4 պայմանագրական կառախմբոց, արեւելեան ճեպընթացին չբանած օրերն, այսինքն.

Կ. Պոլսէն մեկնող Թիւ 4 կառախմբին) Կիրակի, երեքշաբթի, չորեքշաբթի ուրբաթ և շաբաթ օրերը

Պելովայէն մեկնող Թիւ 7 կառախմբին) Կիրակի, երկուշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի եւ շաբաթ օրերը

Ուղեւորք կրնան զայն ի կիր առնուլ յաւելուածական սակ մը վճարելով.

Ա. կարգ	Բ. կարգ	
Ֆր. 10.—	Ֆր. 7.—	Կ. Պոլսէն Ադր. Պոլսոյ համար կամ փոխադարձաբար
» 12.—	» 9.—	Կ. Պոլիս Փիլիպէ Պելովայի համար կամ փոխադարձաբար

8.—Արեւմտեան Եւրոպայի ժամանակը [Ա. Ե. Ժ.] 4 վայրկեան առաջ է Կ. Պոլսոյ տեղական ժամուն վրայ։

9.—Միջին Եւրոպայի ժամանակը [Մ. Ե. Ժ.] 32 վայրկեան ետք է Սելանիկի ժամուն վրայ։

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

Լ'ԷՔՕՆՈՄԻ ԷՆԹԷՌՆԱՍԻՕՆԱԼ

L'ECONOMIE INTERNATIONALE

ԽՆԱՅՈՂՈՒԹԻՒՆ, ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ, ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

Ապահովագրական փոխադարձ ընկերութիւն վասն վերակազմութեան դրամագլխոյ

Հաստատեալ Գաղղիոյ Հանրապետութեան 1868 յունվար 22 հրամանագրոյն համեմատ

ԿԸ ԳՈՐԾԷ ԸՆԴ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՄԲ ԳԱՂՂԻՈՅ ՏԷՐՈՒԹԵԱՆ

Ամէն ոք գիտէ խնայողութեան կարեւորութիւնը, բայց շատ անգամ դժուարնալով մեր խնայած և աւելցուցած ստակներն ընդունող յատուկ հաստատութիւններ կը կորսնցնենք դրամագլուխ մը կազմելու առիթն և հազար ու մէկ պատճառներ գտնելով մեր խնայածստակներն յումպէտս կը վատնենք.

Փոքր գումարներով դրամագլուխ մը կազմելն ալ դժուարին և գրեթէ անկարելի է, եթէ այսպիսի ընկերութեան մը հետ մասնաւոր կապակցութիւն մի չունենանք.

Ահաւասիկ «Լ'Էքօնօմի էնթէռնասիօնալ» ընկերութիւնն որուն փոքր գումարներ, այսինքն ամիսը հինգ, տասը եւն վճարելով, ապագային մեր ձեռքը կ'ունենանք համեստ դրամագլուխ մը.

ԱՐԻԹԷՆ ՕԳՏՈՒԻՆՔ 265

Աւելի մանրամասն տեղեկութիւն ուզող և բաժանորդագրուիլ փափաքողները կը հրաւիրուին դիմել ի Սիրքէճի, հանրային պարտուց պաշտօնատան դիմացը, Կիւլպէնկեան խան, Թիւ 26-27. ընդհանուր տնօրէն Բ. ՇԷՀԻՐԼԵԱՆԻ կամ ընդհանուր քննիչ ԱՆԻՔՏՈՍ ԱՀԱՐՕՆԵԱՆԻ.

ԴԵՂ ՋԵՐՄԻ ԵՒ ՏԵՆԴԻՑ

Տօքթօր Այերի ջերմային հիւանդութեան, այսինքն՝ որ անխառն բաղադրութիւն մի է զուտ բուսականներէ, է դառնահամ և ազդու կազդուրիչ ամէն տեսակ Ֆիզիքական խանգարմանց, որ յառաջ կուգան ճախճախուտ վայրերու ջերմոտ կլիմային վատ ու ապականեալ օդերէն, որուն օգտակարութիւնն և ապաքինիչ առոյգ յատկութիւնն երաշխաւորեալ է նորա անհամար արդիւնքը առոյգ գիտութեամբն։ Այս Ֆիզիքական խանգարումներն յառաջ կուգան օդին մէջ լողացող Թունաւոր անձայն մարելի նիւթոց միջոցաւ, որք Թոքերէն անցնելը կը մտնեն արեան մէջ, կը խանգարեն յարգն, և յառաջ կը բերեն տեսակ տեսակ ջերմեր և տենդեր, և արեան Թունաւորումն. որոց առ անուննեցն նշուած է. ջերմ և սարսուռ, Թագուն ջերմ պարբերական ջերմ, ընդհատեալ ջերմ միօրեայ տենդ և հրատապ տենդեր։

Թունաւորեալ օդերէ պատճառեալ հիւանդութիւնք կը պատահին այն տեղեր ուր մթնոլորտն ապականեալ և Թունաւորեալ է ճահիճներէ կամ ճախճախուտ վայրերէ մահահոտ նիւթով, կամ բաց աղբանոցներէ և ականներու ծակուտիներէն ելած Թունաւոր կազերով, զորս մարդիկ կը ծծեն շնչառութեամբ։

Այերի ջերմի ու տենդից դեղը կը ջնջէ այդ Թունաւոր նիւթոց կամ կազերու ազդեցութիւնն դուրս կը գտնէ զայն մարմինն մէջէն, որով դեղ է ամուլութին [illegible] անվտանգ և անխտս է և օգտակար առոյգ, միայն Թէ տրուած հրահանգի համեմատ գործածուի։ Կը ծախուի Մինասեան և Ընկ. Ամերիկեան վաճառատան մէջ ի Ղալաթիա Կ. Պոլսոյ։ 22

ՔԻՒՆԱՐՏ (CUNARD)

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՇՈԳԵՆԱՒՈՒՑ

Որք ամիսը երկու անգամ կը բանին Լիվէրփուլ և Ասիա-Ելէն մէջ

Անուանք	Թօնոյ	Անուանք	Թօնոյ
Ումպրիա	7718	Գադալոնիա	4845
Էթրուրիա	7718	Գօթնիա	4531
Սէրվիա	7391	Սամարիա	3574
Աւրանիա	7268	Մարաթոն	2403
Բաւոնիա	5587	Ատլաս	2393
Ցեֆալոնիա	5517	Սարտինիա	2166
Կալլիա	4809	Բարթիա	2246
Սիթիա	4557	Բալմիրա	2144
Ալեբբօ	2243	Թրինիտատ	899
Քեսար	1876	Մօրօքքօ	1855
Էգիբտոս	1614		

«Սարակօսա» շոգենաւը, Նաւապետ Ռօպէրթս, Լիվրբուլէն աստ կը սպասուի դէպ ի ամսոյս 27.

Դիմել առ ԹՈՄԱՍ Ձ. ՃՈԼԻ գործակալ

Thomas C. Joly

Ալիքսիատիս խան Թիւ 11

17 Ղալաթիա

Արտօնատէր Ս ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈ